ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

ԴԻՄՈՂ՝ «Հանուն Հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակցություն

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Հանրապետության փողոց, 24 շենք

ԴԻՄՈՂԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝

Փաստաբան Վահագն Ռոբերտի Մարտիրոսյան

Փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 1486, ՀՀ քաղաքացու նույնականացման քարտ՝ 006185672, տրված 07.08.2017 թ-ին 046-ի կողմից, հանրային ծառայությունների համարանիշ՝ 2408740246, հաշվառման հասցե՝ ՀՀ, Կոտայքի մարզ, քաղաք Եղվարդ, Գագարինի 25, բնակության և ծանուցման հասցե՝ ՀՀ , քաղաք Երևան, Հալաբյան 25, բնակարան 36, էլեկտրոնային փոստի հասցե՝ martirosyanlegal@gmail.com, հեռախոսահամար՝ +374-91-11-93-22, +374-55-74-08-14,

ՊԱՏԱՍԽԱՆՈՂ՝ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով

Հասցե՝ ՀՀ, քաղաք Երևան, Գևորգ Քոչարի փողոց, 21Ա շենք

ԴԻՄՈՒՄ

(Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 14-ի N 259-Ա որոշումը վերանայելու, ընտրությունների արդյունքները անվավեր ճանաչելու և մանդատների բաշխման կարգ սահմանելու պահանջների մասին)

Սահմանադրական դատարան դիմելու իրավական հիմքը՝ ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի 5-րդ կետ, 169-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետ

1. ՆԱԽԱԲԱՆ

Սույն դիմումով Սահմանադրական դատարանի քննությանն է հանձնվում ոչ միայն ընտրական առանձին իրավախախտումների հարցը, այլ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրությունների սահմանադրականության հարցը՝ այն իմաստով, թե արդյոք այդ ընտրությունների արդյունքում ձևավորված հանրային իշխանությունը կարող է համարվել ժողովրդի ազատ, իրական և անխաթար կամարտահայտության արտահայտություն:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ՄՏԻՑ ԹԻՎ 3-74
«19» 06 2026Թ.

Դիմող կողմը չի խնդրում Սահմանադրական դատարանին փոխարինել քրեական հետապնդման մարմիններին կամ քրեական դատարաններին: Սույն վեճի շրջանակը քրեական պատասխանատվության անհատականացման հարցը չէ: Սույն վեճի առարկան այն է, թե իրավասու պետական մարմինների կողմից պաշտոնապես հրապարակված և քրեական վարույթների շրջանակում արձանագրված փաստական տվյալների ամբողջությունը արդյոք վկայում է այնպիսի կազմակերպված, զանգվածային, կրկնվող և համակարգային ընտրախախտումների մասին, որոնց պայմաններում խախտվել են ՀՀ Սահմանադրության 2-րդ և 7-րդ հոդվածներով երաշխավորված ժողովրդաիշխանության և ազատ ընտրությունների սկզբունքները:

Ընտրությունը ժողովրդական ինքնիշխանության իրացման հիմնական սահմանադրական մեխանիզմն է: Հետևաբար ընտրությունների սահմանադրականությունը չի կարող գնահատվել միայն քվեաթերթիկների հաշվարկման կամ մանդատների թվաբանական բաշխման տեսանկյունից:

Սահմանադրական գնահատման առանցքային հարցն է՝ արդյոք ընտրողի կամքը ձևավորվել և արտահայտվել է ազատ միջավայրում, թե՞ այդ կամքի ձևավորման և արտահայտման վրա գործադրվել է նյութական, կազմակերպական, հոգեբանական կամ այլ ապօրինի համակարգային ազդեցություն:

Սույն գործով ներկայացված պաշտոնական տվյալների ամբողջությունը վկայում է, որ ընտրական գործընթացում առկա խախտումները չեն եղել մեկուսացված, պատահական կամ միայն տեղամասային բնույթի: Դրանք դրսևորվել են ընտրական գործընթացի տարբեր փուլերում, տարբեր տարածքներում, տարբեր քաղաքական ուժերի ներկայացուցիչների, շտաբային կառույցների, միջնորդավորված ցանցերի, վստահված անձանց, հանձնաժողովի անդամների, տեղական ազդեցության կենտրոնների և ֆինանսական մեխանիզմների ներգրավմամբ:

Այդ հանգամանքների համակցությունը ձևավորում է ոչ թե առանձին քրեական դրվագների շարք, այլ ընտրական միջավայրի համակարգային աղավաղման պատկեր: Դիմող կողմը հայցում է Սահմանադրական դատարանի սահմանադրական վերահսկողական լիազորության իրացումը՝ պարզելու համար, թե արդյոք վիճարկվող ընտրությունների արդյունքում հնարավոր է արժանահավատորեն վերականգնել ընտրողների իրական կամքը, և եթե ոչ՝ կիրառելու «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 14-րդ մասով նախատեսված իրավական հետևանքը:

2. ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՉԱՓԱՆԻՇԸ.

Սույն գործով ապացուցման առարկան ոչ թե յուրաքանչյուր առանձին ընտրողի քվեարկության պատճառական շարժառիթի բացահայտումն է և ոչ թե յուրաքանչյուր մեղադրյալի քրեական մեղավորության հաստատումը, այլ այն հանգամանքը, թե արդյոք ընտրական գործընթացում արձանագրված խախտումների բնույթը, ծավալը, տարածվածությունը և փոխկապակցվածությունը խախտել են ընտրողների ազատ կամարտահայտության սահմանադրական երաշխիքը և անհնարին դարձրել ընտրությունների իրական արդյունքների արժանահավատ պարզումը:

Ընտրական վեճի սահմանադրական ապացուցման չափանիշը չի նույնանում քրեական վարույթի ապացուցման չափանիշի հետ: Քրեական վարույթում ապացուցվում է կոնկրետ անձի մեղավորությունը՝ քրեական դատավարության կանոններով: Սահմանադրական ընտրական վեճում գնահատվում է ընտրական գործընթացի ամբողջականությունը, ընտրական միջավայրի ազատությունը, հավասար մրցակցության ապահովվածությունը և ընտրողների իրական կամքի արժանահավատորեն պարզման հնարավորությունը:

Այդ իսկ պատճառով, Սահմանադրական դատարանը իրավասու է գնահատել ոչ միայն օրինական ուժի մեջ մտած դատավճիռներով հաստատված հանգամանքները, այլ նաև իրավասու պետական մարմինների կողմից պաշտոնապես հրապարակված տվյալները, քրեական վարույթների նյութերը, մեղադրական եզրակացությունները, խուզարկությունների արդյունքները, ֆինանսական և կազմակերպական սխեմաների վերաբերյալ փաստական տվյալները, տեսագրությունները, ձայնագրությունները, փաստաթղթերը, ցուցակները և այլ ապացույցները՝ դրանց համակցված սահմանադրաիրավական նշանակության տեսանկյունից:

Հակառակ մոտեցումը կհանգեցներ այն անընդունելի հետևանքին, որ ընտրությունների արդյունքների սահմանադրական վերահսկողությունը գործնականում կախված կդառնար քրեական վարույթների ավարտից, այն դեպքում, երբ ընտրական վեճերի քննության սահմանադրական ժամկետները կարճ են և ուղղված են հենց ընտրությունների արդյունքում ձևավորվող իշխանության լեգիտիմության անհապաղ ստուգմանը:

Ուստի սույն գործով Սահմանադրական դատարանի քննության կենտրոնում պետք է լինի ոչ թե հարցը՝ արդյոք յուրաքանչյուր դրվագով կա վերջնական դատավճիռ, այլ հարցը՝ արդյոք պետական մարմինների կողմից արձանագրված փաստերի ամբողջությունը ցույց է տալիս այնպիսի համակարգային աղավաղում, որի պայմաններում ընտրությունների իրական արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն պարզել:

3. ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՔՈՒՄ ԴՐՎԱԾ ՓԱՍՏԵՐԸ.

Հանրապետության նախագահի 2026 թվականի փետրվարի 6-ի «Ազգային ժողովի հերթական ընտրություն նշանակելու մասին» ՆՀ-21-Ն հրամանագրի համաձայն՝ Ազգային ժողովի հերթական ընտրությունը նշանակվել է 2026 թվականի հունիսի 7-ին: Ընտրություններին մասնակցելու համար գրանցվել է 18 քաղաքական ուժ՝ 16 կուսակցություն և 2 դաշինք: Քվեարկությունը անցկացվել է 2026 թվականի հունիսի 7-ին ժամը 8.00-ից մինչև 20.00-ն:

ՀՀ ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածին և 18-րդ հոդվածի 1-ին և 2.1 մասերին համապատասխան քվեարկությունը կազմակերպելու և քվեարկության արդյունքներն ամփոփելու նպատակով հանրապետության տարածքում կազմավորվել է թվով 2005 ընտրական տեղամաս և սահմանվել 2005 տեղամասային կենտրոններ, որից 9-ը՝ քրեակատարողական հիմարկներում (հիմք՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 17-րդ հոդվածի 4-րդ մաս և 18-րդ հոդվածի 1-ին մաս):

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 36-րդ հոդվածին և 44-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերին համապատասխան գործել է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ և տեղամասային ընտրական հանձնաժողովներ:

Հայաստանի Հանրապետությունում գործել է ընդհանուր թվով 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝ 10-ը՝ Երևան քաղաքում և 28-ը՝ հանրապետության մարզերում: Ընտրությունների ողջ գործընթացը կազմակերպել և վերահսկել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

ՀՀ ընտրական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից ստացված ընտրական տեղամասերում քվեարկությունների արդյունքների հիման վրա քվեարկության ավարտից հետո 24 ժամվա ընթացքում, ամփոփել է Ազգային ժողովի ընտրության քվեարկության նախնական արդյունքները և արձանագրությամբ վավերացրել դրանք:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2026 թվականի հունիսի 14-ին՝ հիմք ընդունելով ընտրական տեղամասերում, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները, կազմել է արձանագրություն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրության քվեարկության արդյունքների վերաբերյալ:

Այնուհետև կատարված վերահաշվարկները

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 10-ի N 249-Ա որոշմամբ վերահաշվարկ է կատարվել 12/46, 13/47, 16/3, 17/1, 17/6, 17/7, 17/51, 27/2, 29/50, 22/37, 23/40, 23/52, 24/47, 25/24, 31/21, 31/23, 34/3, 38/35, 38/41, 16/61, 26/16, 27/20, 32/6, 34/24, 38/28, 12/16, 20/6, 31/19, 34/29, 34/47, 17/63, 22/2, 22/39, 36/38, 12/54, 17/2, 17/40, 18/46, 22/15, 24/11, 31/2, 33/52, 36/27, 36/39, 37/19, 38/53, 12/47, 14/39, 35/9, 11/28, 23/42, 34/14, 24/37, 29/26, 14/1, 23/12, 35/61, 29/2, 34/36, 31/41, 32/31, 22/36, 33/5, 16/21, 36/20, 31/09 ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքներով:

Այնուհետև առանձին տեղամասերի արդյունքների անվավեր ճանաչելը

Անվավեր են ճանաչվել 12/13, 35/65 և 10/51 ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքները: Մասնավորապես՝

Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակով 2026թ. հունիսի 9-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել է Ուժեղ Հայաստան դաշինքի լիազոր ներկայացուցիչ Գոհար Մելոյանի դիմումը (թվակիր համար 2042836) հետևյալ բովանդակությամբ. «Հաշվի առնելով, որ հունիսի 7-ին կազմակերպված Ազգային ժողովի հերթական ընտրությունների նախնական ամփոփված արդյունքների 9 արդյունքում հրապարակված անվավեր քվեաթերթիկների քանակն /17097 քվեաթերթիկ/ էականորեն ավել են եղել նախորդ 2 համապետական ընտրությունների ընթացքում արձանագրված անվավեր քվեաթերթիկների արդյունքներից /2021թ.՝ 4593 քվեաթերթիկ, 2018 թ. 4706՝ քվեաթերթիկ/, խնդրում եմ ապահովել անվավեր քվեաթերթիկների վերահաշվարկը:

Միաժամանակ , պահանջում ենք անվավեր ճանաչել 12/13 ընտրատեղամասի արդյունքները՝ հաշվի առնելով, որ բազմաթիվ ահազանգերի արդյունքում՝ արձանագրումներ են եղել, որ 8-րդ համարի՝ Ազգային ժողովրդական բևեռ համահայկական կուսակցության քվեաթերթիկը տեղադրված չի եղել քվեաթերթիկների սեղանին և չի տրամադրվել ընտրողներին:»:

Նույն օրը՝ 2026թ. հունիսի 9-ին, դիմումատուին տեղեկացվել է, որ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը հստակ սահմանում է այն ընտրական հանձնաժողովը, որի իրավասության սահմաններում է ներկայացված դիմումով բարձրացված հարցի լուծումը: Մասնավորապես , Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությամբ սահմանվում է. «Դիմողը դիմումը հասցեագրում է այն ընտրական հանձնաժողովին, որի իրավասության սահմաններում է բարձրացված հարցի լուծումը:»: Դիմումով ներկայացվել է թիվ 12/13 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու և անվավեր քվեաթերթիկները վերահաշվարկելու պահանջ: Դիմումը ներկայացվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողով, այնինչ հիմք ընդունելով Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 14-րդ մասի 1-ին պարբերության կանոնակարգումները, որոնց համաձայն. Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում կարող է ներկայացվել միայն համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով իրավասու անձի կողմից՝ քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն, պետք է ներկայացվեր միայն թիվ 12 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով: Ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ «Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում կարող է ներկայացվել միայն համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:»: Այնուհանդերձ, թիվ 12 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ 2026թ. հունիսի 12-ի «Սեփական նախաձեռնությամբ թիվ 12/13 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին» N 14-Ա որոշմամբ անվավեր է ճանաչել Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով թիվ 12/10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորված թիվ 12/13 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները: Թիվ 12 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2026թ. հունիսի 12-ի «Սեփական նախաձեռնությամբ թիվ 12/13 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին» N 14-Ա որոշումը վարչական կամ դատական կարգով չի բողոքարկվել:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2026թ. հունիսի 11-ի «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սեփական նախաձեռնությամբ թիվ 35 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 11-ի N 10-Ա որոշումը վերանայելու մասին» N 254-Ա որոշմամբ անվավեր է ճանաչել թիվ 35 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2026թ. հունիսի 11-ի «Հայաստանի

Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ին կայացած հերթական ընտրությունների տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը արձանագրված խախտումների վերաբերյալ» N 10-Ա որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով թիվ 35 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության նախորդ և քվեարկության օրը՝ հունիսի 7-ին արձանագրված խախտումները որևէ ազդեցություն չեն կարող ունենալ քվեարկության արդյունքների վրա» թիվ 35/65 ընտրական տեղամասի քվեարկության արդյունքների մասով, և նույն որոշման 2-րդ կետով անվավեր է ճանաչել Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով թիվ 35 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորված թիվ 35/65 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2026թ. հունիսի 11-ի «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սեփական նախաձեռնությամբ թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 11-ի N 8-Ա որոշումը վերանայելու մասին» N 255-Ա որոշմամբ անվավեր է ճանաչել թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2026թ. հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը արձանագրված խախտումների վերաբերյալ» N 8-Ա որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 07.06.2026 թ., արձանագրված 11 խախտումների վերաբերյալ գնահատականները որևէ ազդեցություն չեն կարող ունենալ քվեարկության արդյունքների վրա» թիվ 10/51 ընտրական տեղամասի քվեարկության արդյունքների մասով, և նույն որոշման 2-րդ կետով անվավեր է ճանաչել Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորված թիվ 10/51 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 72-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն.

«5. Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչվելու դեպքում այդ տեղամասում քվեարկության մասնակիցների թիվն արձանագրվում է որպես տեղամասում անճշտությունների գումարային չափ:

6. Քվեարկության արդյունքների արձանագրությունը կազմելիս մսացած տեղամասերի քվեարկության արդյունքներին համապատասխանաբար գումարվում է *քվեարկության*

արդյունքներն անվավեր ճանաչված տեղամասի քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը: Քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչված ընտրական տեղամասի արձանագրության մյուս արդյունքները (թվերը), բացառությամբ անճշտությունների չափի, արձանագրվում են 0:»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 11.06.2026թ. N 254-Ա, N 255-Ա և թիվ 12 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի N 14-Ա որոշումներով ապահովվել են նաև Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 72-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի պահանջների կատարումը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 14.06.2026թ. N 259-Ա որոշմամբ ամփոփվել են ՀՀ ԱԺ 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների արդյունքները:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ մանդատների բաշխմանը մասնակցել են.

1. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը՝ կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը՝ 726,818 (49.7466%),

2. «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքը՝ 340,006 (23.2715%),

3. Հայաստան դաշինքը՝ կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը 144,983 (9.9233%):

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝ Ազգային ժողովի մանդատները բաշխվում են կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև՝ նրանցից յուրաքանչյուրին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվին համամասնորեն: Յուրաքանչյուր կուսակցության (կուսակցությունների դաշինքի) հասանելիք մանդատների թվի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ. յուրաքանչյուր կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը բազմապատկվում է 101-ով, արդյունքը բաժանվում է արգելապատնեշը հաղթահարած կուսակցություններին (կուսակցությունների դաշինքին) կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի վրա (այդ թիվն է 1,211,808) և առանձնացվում են ամբողջ թվերը, որոնք յուրաքանչյուր կուսակցության (կուսակցությունների դաշինքի) հասանելիք մանդատների թվերն են: Մինչև 101 մանդատ մնացած մանդատները կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև բաշխվում են ըստ մնացորդների մեծության հերթականության՝ յուրաքանչյուրին մեկական մանդատ սկզբունքով: Մնացորդների մեծության հավասարության դեպքում վիճարկվող մանդատը տրվում է այն կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին), որին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվն ամենամեծն է, իսկ դրանց հավասարության դեպքում մանդատը տրվում է վիճակահանությամբ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 14.06.2026թ. N 259-Ա որոշման համաձայն՝ ՀՀ Ազգային ժողովի մանդատները բաշխվել են հետևյալ համամասնությամբ՝

1. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն - 61 մանդատ.

2. «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինք - 28 մանդատ

3. Հայաստան դաշինք - 12 մանդատ:

Միաժամանակ, ընտրական ցուցակների 2-րդ մասից 3 մանդատ (Եզդի, Ռուս, Քուրդ) ստացել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը և 1-ը (Ասորի) «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքը:

4. ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԷԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ.

Թեև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի համապատասխան որոշումներով անվավեր են ճանաչվել 12/13, 35/65 և 10/51 ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքները, սակայն գտնում ենք, որ ընտրությունների արդյունքները անվավեր ճանաչելուն զուգահեռ պետք է նաև սահմանել մանդատների բաշխման կարգ, քանի որ ՀՀ Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրություններից առաջ և ընտրությունների օրը տեղի ունեցած իրավախախտումները (ընտրախախտումները), ինչպես նաև ընտրակաշառքի դեպքերն ունեցել են կազմակերպված, զանգվածային, կրկնվող, պարբերական բնույթ: Մասնավորապես, տեղի ունեցած զանգվածային խախտումների մասին են վկայում համապատասխան իրավապահ մարմինների կողմից, ինչպես նաև պաշտոնական լրատվամիջոցներով տարածված հետևյալ հաղորդագրությունները.

1. **ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի և ԱԱԾ կողմից իրականացրած** միջոցառումների հիման վրա Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով փաստական տվյալներ են ստացվել «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի պատգամավորի թեկնածուի կողմից Ազգային ժողովի ընտրություններին հիշյալ դաշինքի օգտին քվեարկելու պայմանով Լոռու մարզի մի շարք բնակիչների ընտրակաշառք տալու դեպքերի մասին: Ձերբակալվել են մի շարք անձինք: https://www.anticorruption.am/hy/post/mi-shark-ntroghneri-ntrakashark-talu-hertakan-depkern-en-batsahaytvel

2. **ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի և ՆԳՆ քրեական ոստիկանության Կոտայքի մարզային վարչության** ծառայողների կողմից բացահայտվել և չեզոքացվել է շուրջ 45 ընտրողի ընդհանուր 7,5 մլն ՀՀ դրամի չափով ընտրակաշառք տալու հանցավոր սխեմա. ձերբակալվել է 7 անձ: https://www.anticorruption.am/hy/post/hakakoruptsion-komitei-yev-ngn-tsarayoghneri-koghmits-batsahaytvel-yev-chezokatsvel-e-shurj-45-ntroghi-ndhanur-7-5-mln-hh-drami-chapov-ntrakashark-talu-hantsavor-skhema

3. **ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի և ԱԱԾ կողմից** իրականացված միջոցառումների հիման վրա Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով փաստական տվյալներ են ստացվել առ այն, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի տեղամասային հանձնաժողովի նախագահը, օգտվելով տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ առաջադրելու՝ օրենքով նախատեսված հնարավորությունից, հանձնաժողովի անդամներ ընտրելիս նախապատվությունը տվել է այն անձանց, որոնք համաձայնել են հանձնաժողովում ընդգրկվելու և դրա դիմաց վարձատրություն ստանալու պայմանով ապահովել ինչպես իրենց, այնպես էլ իրենց կողմից ներգրավված կոնկրետ թվով անձանց քվեարկությունը՝ հանձնաժողովի անդամությունը և դրա դիմաց նախատեսված վարձատրությունը

փաստացի օգտագործելով որպես քվեներ ձեռք բերելու միջոց: Դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են մի շարք անձինք: https://www.anticorruption.am/hy/post/5-andz-dzerbakalvel-e-ntrakashark-talu-stanalu-meghadranknerov

4. **ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի և ԱԱԾ կողմից** իրականացված միջոցառումների հիման վրա Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով փաստական տվյալներ են ստացվել առ այն, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության համակիրն այլ անձանց հետ Ազգային ժողովի ընտրություններին իրենց կուսակցության օգտին քվեարկելու պայմանով Արարատի մարզի մի շարք ընտրողների տվել են ընտրակաշառք: Դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են շուրջ մեկ տասնյակ անձինք, կատարվել են խուզարկություններ: https://www.anticorruption.am/hy/post/hakakoruptsion-komitei-tsarayoghner-batsahaytel-en-ntrakashark-talu-stanalu-nor-depker

5. **ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի և ԱԱԾ կողմից** իրականացրած միջոցառումների հիման վրա Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով փաստական տվյալներ են ստացվել առ այն, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի համակիրներն այլ անձանց հետ Ազգային ժողովի ընտրություններին հիշյալ դաշինքի օգտին քվեարկելու, ինչպես նաև այդ նպատակով ընտրողներ հավաքագրելու պայմանով՝ ռուսաստանաբնակ ամուսիններ հանդիսացող ՀՀ երկու քաղաքացիների խոստացել են՝ հունիսի 8-ին ընտրվելուց հետո լուծել թմրամիջոց պահելու համար ՌԴ դատապարտվող վերջիններիս որդիներին ազատ արձակելու և Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու հարցը: Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են վարութային գործողություններ: https://www.anticorruption.am/hy/post/hkk-tsarayoghneri-koghmits-ntrakashark-talu-stanalu-nor-depker-en-batsahaytvel

6. **ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի և քրեական ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության ծառայողների** կողմից իրականացված միջոցառումների հիման վրա Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով փաստական տվյալներ են ստացվել առ այն, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության համակիրն այլ անձանց հետ Ազգային ժողովի ընտրություններին իրենց կուսակցության օգտին քվեարկելու պայմանով Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի մի շարք ընտրողների տվել է ընտրակաշառք: Դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են խուզարկություններ: https://www.anticorruption.am/hy/post/hakakoruptsion-komiten-batsahaytel-e-ntrakashark-talu-hertakan-depker

7. 2026 թվականի փետրվարի 7-ից կոռուպցիոն բնույթի ընտրական հանցագործությունների դեպքերի առթիվ նախաձեռնվել է 115 քրեական վարույթ, որոնցից՝ 77-ը վերաբերել են «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքին - 67%, 24-ը՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը – 20,8%, 11-ը՝ «Հայաստան» կուսակցությունների դաշինքին – 9,6% , քրեական վարույթներով հանրային քրեական հետապնդում է հարուցվել

242 անձի նկատմամբ: 100 մեղադրյալի նկատմամբ ընտրվել են անազատության հետ կապված խափանման միջոցներ, այդ թվում՝ 52-ի նկատմամբ կալանքը – 21,3%,48-ի նկատմամբ՝ տնային կալանքը – 19,7%, 120 մեղադրյալի նկատմամբ ընտրվել են այլընտրանքային խափանման միջոցներ, 20-ի նկատմամբ՝ վարչական հսկողություն – 8,2%, 100-ի նկատմամբ՝ բացակայելու արգելք – 41, 19 անձանց նկատմամբ հայտարարվել է հետախուզում, իսկ 54 անձանց վերաբերյալ, 14 քրեական գործ ավարտվել է մեղադրական եզրակացություն կազմելով: Հակակոռուպցիոն կոմիտեն շարունակելու է հետևողական պայքարը կոռուպցիոն բնույթի ընտրական հանցագործությունների դեմ և խստորեն վերահսկելու է հետընտրական գործընթացում հնարավոր իրավախախտումները: Քաղաքացիներին կոչ ենք անում պահպանել օրինականությունը, դրսևորել պատասխանատու վարքագիծ և զերծ մնալ ընտրական գործընթացի վրա ցանկացած ապօրինի ազդեցությունից: https://www.anticorruption.am/hy/post/2026-tvakani-petrvari-7-its-koruptsion-bnuyti-ntrakan-hantsagortsutyunneri-depkeri-artiv-nakhadzernvel-e-115-kreakan-varuyt

8. **ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի և ՀՀ ՆԳՆ ոստիկանության** ծառայողների կողմից իրականացված միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել առ այն, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության պատգամավորի թեկնածուն նույն կուսակցության համակիրների և այլ անձանց հետ ԱԺ ընտրություններին իրենց կուսակցության օգտին քվեարկելու պայմանով Վայոց ձորի մարզի մի շարք բնակիչների տվել է ընտրակաշառք, ինչպես նաև հիշյալ կուսակցության համակիրները նույն մարզի մի շարք բնակիչների նյութապես շահագրգռել են, որպեսզի վերջիններս մասնակցեն նշված կուսակցության կողմից Երևան քաղաքում ս.թ. հունիսի 4-ին անցկացվող հավաքին: Դեպքի առթիվ ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են խուզարկություններ և վարութային այլ գործողություններ: https://www.anticorruption.am/hy/post/evs-4-andz-dzerbakalvel-e-ntrakashark-talu-stanalu-nor-depkerov

9. **ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի և ԱԱԾ Լոռու ՄՎ ծառայողների** կողմից իրականացված միջոցառումների արդյունքում Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության Լոռու մարզի Վանաձոր համայնքում գործող տարածքային շտաբի ներկայացուցիչ հանդիսացող և նույն կուսակցության անունից հանդես եկող անձը կուսակցության օգտին քվեարկելու, ինչպես նաև ընտրակաշառքի դիմաց հիշյալ կուսակցությանն ընտրելու պատրաստակամ անձանց հավաքագրելու պայմանով մի շարք ընտրողների տվել է ընտրակաշառք: Դեպքի առթիվ Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են խուզարկություններ և վարութային այլ գործողություններ: https://www.anticorruption.am/hy/post/batsahaytvel-en-ntrakashark-talu-stanalu-depker

10. **ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում** փետրվարի 7-ից մինչ օրս ընտրական հանցագործությունների վերաբերյալ նախաձեռնվել է 125 քրեական վարույթ՝ ընտրակաշառք տալու և ստանալու, ընտրակաշառքի միջնորդության, ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելու և դրանց հետ համակցված այլ

հանցագործությունների դեպքերի առթիվ: Նշված քրեական վարույթներից 66-ով ձերբակալվել է 227 անձ, քրեական հետապնդում է հարուցվել 248 անձի նկատմամբ: 15 մեղադրյալի նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Մեղադրյալներից 108-ի նկատմամբ ընտրվել է անազատության հետ կապված՝ կալանք (55) և տնային կալանք (53) խափանման միջոցներ, իսկ 122-ի նկատմամբ՝ այլընտրանքային խափանման միջոցներ: 66 քրեական վարույթով իրականացվել են բազմաթիվ վարութային գործողություններ, այդ թվում՝ հարցաքննվել է 300-ից ավելի անձ, խուզարկություններ են կատարվել մի շարք գրասենյակներում: 21 վարույթով նախաքննությունը՝ 90 անձի վերաբերյալ, ավարտվել է մեղադրական եզրակացություն կազմելով դատարան ուղարկելու համար: https://www.anticorruption.am/hy/post/hh-hakakoruptsion-komitei-nakhagahn-orensdrakan-popokhutyunner-nakhadzernelu-mijnordutyamb-dimel-e-hh-ardaradatutyan-nakhararin

11. **ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների** կողմից իրականացված միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ներկայացուցիչները Ազգային ժողովի ընտրություններին իրենց կուսակցության օգտին քվեարկելու և աջակիցներ հավաքագրելու պայմանով Լոռու մարզի Սպիտակ համայնքի Գոգարան բնակավայրի և հարակից շրջանների մի շարք ընտրողների տվել են ընտրակաշառք: Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են վարութային գործողություններ: https://www.anticorruption.am/hy/post/hakakoruptsion-komiten-batsahaytel-e-ntrakashark-talu-stanalu-hertakan-depker

12. **Հակակոռուպցիոն կոմիտեն** դիմել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ պատգամավորի թեկնածու գրանցված Դ. Ղ.-ին անձեռնմխելիությունից զրկելու նպատակով ԿԸՀ միջնորդություն ներկայացնելու համար: ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների կողմից իրականացված միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության Երևանի Արաբկիր վարչական շրջանի գրասենյակում որպես պատասխանատու նշանակված անձինք, ինչպես նաև նույն կուսակցության պատգամավորի թեկնածու գրանցված Դ. Ղ.-ն, կուսակցության համակիրների և նրանց հետ համագործակցող մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ ընտրողներին խոստացել, ինչպես նաև տվել են ընտրակաշառք: Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են խուզարկություններ և վարութային այլ գործողություններ: https://www.anticorruption.am/hy/post/nor-batsahaytumner-ntrakashark-talu-stanalu-depkeri-artiv-1

13. **ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի** ծառայողների կողմից իրականացրած միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի պատգամավորի թեկնածուի հոր կողմից Ազգային ժողովի ընտրություններին հիշյալ դաշինքի օգտին քվեարկելու պայմանով ընտրակաշառք տալու, ինչպես նաև հավաքին մասնակցելու համար նյութապես շահագրգռելու դեպքերի մասին: Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են խուզարկություններ և վարութային այլ

գործողություններ: https://www.anticorruption.am/hy/post/ntrakashark-talu-stanalu-nor-depker-en-batsahaytvel

14. ՀՀ **հակակոռուպցիոն կոմիտեի** ծառայողների կողմից իրականացրած միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել «Հայաստան» կուսակցությունների դաշինքի պատգամավորի թեկնածուի կողմից այլ անձանց հետ Ազգային ժողովի ընտրություններին հիշյալ դաշինքի օգտին քվեարկելու պայմանով Արագածոտնի մարզի մի շարք բնակիչների ընտրակաշառք տալու դեպքերի մասին: Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են խուզարկություններ և վարութային այլ գործողություններ:https://www.anticorruption.am/hy/post/ntrakashark-talu-stanalu-nor-depkerov-dzerbakalvel-e-yevs-3-andz-nrantsits-erkus-kalanavorvel-en-1

15. ՀՀ **ազգային անվտանգության ծառայության** կողմից իրականացված միջոցառումների հիման վրա Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով փաստական տվյալներ են ստացվել առ այն, որ «Հայաստան» կուսակցությունների դաշինքի պատգամավորի թեկնածուն, օգտվելով տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ առաջադրելու՝ օրենքով նախատեսված հնարավորությունից, ժողովրդավարական գործընթացների նկատմամբ վստահության ապահովմանը միտված ինստիտուցիոնալ երաշխիքը ծառայեցրել է իր քաղաքական շահերին: Մասնավորապես, հանձնաժողովի անդամներ ընտրելիս վերջինս նախապատվությունը տվել է այն անձանց, որոնք համաձայնել են հանձնաժողովում ընդգրկվելու և դրա դիմաց վարձատրություն ստանալու պայմանով ապահովել ինչպես իրենց, այնպես էլ իրենց կողմից ներգրավված կոնկրետ թվով անձանց քվեարկությունը՝ հանձնաժողովի անդամությունը և դրա դիմաց նախատեսված վարձատրությունը փաստացի օգտագործելով որպես քվեներ ձեռք բերելու միջոց: Դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են խուզարկություններ, որոնց ընթացքում հայտնաբերվել են էլեկտրոնային կրիչներ, համակարգիչներ, գաղտնալսող միջոցներ հայտնաբերող սարքավորում, ինչպես նաև վարույթի համար ապացուցողական նշանակություն ունեցող՝ գումարային շարժերի, տարբեր քաղաքացիներին օգնություններ տրամադրելու վերաբերյալ մի շարք այլ փաստաթղթեր: https://www.anticorruption.am/hy/post/hakakoruptsion-komitei-tsarayoghneri-koghmits-batsahaytvel-en-ntrakashark-talu-stanalu-nor-depker

16. ՀՀ **հակակոռուպցիոն կոմիտեն** բացահայտել է այնպիսի ընտրակաշառքի սխեմա և կանխել դրա հետագա հանցավոր գործունեությունը, որում ներգրավված են եղել նաև նախկին բարձրաստիճան պաշտոնատար անձինք, այդ թվում՝ Պետական գույքի կառավարման վարչության պետի պաշտոնը զբաղեցրած Ա.Ս.-ն: 4 անձ ձերբակալվել է ընտրակաշառք տալու, ստանալու մեղադրանքներով, նրանցից 2-ի նկատմամբ դատարանի որոշմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը: Ձեռնարկվում են ակտիվ քրեադատավարական միջոցառումներ հանցավոր սխեմայում ընդգրկված անձանց ամբողջական շրջանակը պարզելու և նրանց նկատմամբ հետապնդումներ սկսելու համար: https://www.anticorruption.am/hy/post/4-andz-dzerbakalvel-e-ntrakashark-talu-stanalu-

meghadranknerov-nrantsits-2-i-nkatmamb-datarani-oroshmamb-orpes-khapanman-mijots-e-kirarvel-kalank

17. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի և ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից իրականացված միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության Երևանի Քանաքեռ Զեյթուն վարչական շրջանի գրասենյակում որպես պատասխանատու նշանակված անձինք, հիշյալ կուսակցության համակիրների և նրանց հետ համագործակցող մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ ընտրողներին խոստացել, ինչպես նաև տվել են ընտրակաշառք: Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են խուզարկություններ և վարութային այլ գործողություններ: https://www.anticorruption.am/hy/post/ntrakashark-talu-stanalu-hertakan-depkeri-artiv-hakakoruptsion-komiteum-nakhadzernvats-kreakan-varuyti-shrjanakum-dzerbakalvel-e-5-andz-orontsits-2-kalanavorvel-e

18. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների կողմից իրականացրած միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել «Հայաստան» կուսակցությունների դաշինքի պատգամավորի թեկնածուի կողմից Ազգային ժողովի ընտրություններին իրենց դաշինքի օգտին քվեարկելու պայմանով ընտրակաշառք տալու դեպքերի մասին: Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են խուզարկություններ և վարութային այլ գործողություններ: https://www.anticorruption.am/hy/post/ntrakashark-talu-stanalu-hertakan-depkern-en-batsahaytvel

19. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների կողմից իրականացված միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության Երևանի Աջափնյակ վարչական շրջանի գրասենյակում որպես պատասխանատու նշանակված անձինք, հիշյալ կուսակցության համակիրների և նրանց հետ համագործակցող մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ ընտրողներին խոստացել, ինչպես նաև տվել են ընտրակաշառք: Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են խուզարկություններ և վարութային այլ գործողություններ: https://www.anticorruption.am/hy/post/hakakoruptsion-komitei-tsarayoghner-batsahaytvel-en-mi-khumb-andzants-koghmits-ntrakashark-talu-hertakan-depker

20. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում բավարար փաստական տվյալներ են ստացվել ռուսաստանաբնակ բլոգեր Մ. Բ.-ի կողմից ՀՀ Ազգային ժողովի հերթական ընտրությանը մասնակցելու պայմանով Ռուսաստանի Դաշնությունում բնակվող Հայաստանի Հանրապետության հարյուրավոր քաղաքացիների ծառայություն և այլ առավելություն խոստանալու տեսքով ընտրակաշառք տալու դեպքերի մասին, որոնց առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ: Ձեռնարկվում են օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ արտերկրում բնակվող և ենթադրյալ ընտրակաշառք ստացած քաղաքացիների ինքնությունները պարզելու և նրանց նկատմամբ

օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ կիրառելու ուղղությամբ: Կոմիտեն հորդորում է ընտրակաշառք ստացած կամ դրա առաջարկի վերաբերյալ տեղեկություններ ունեցող քաղաքացիներին համագործակցել նախաքննական մարմնի հետ՝ ներկայացնելով իրենց հայտնի տվյալներն ու հանգամանքները, ինչպես նաև զերծ մնալ ընտրակաշառքի, ընտրողների կամարտահայտության վրա ազդելու կամ ընտրական այլ իրավախախտումների հետ կապված որևէ գործողություն կատարելուց: https://www.anticorruption.am/hy/post/hakakoruptsion-komiteum-nakhadzernvel-e-varuyt-ntrakashark-talu-yev-stanalu-hertakan-depkeri-artiv

21. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների կողմից իրականացրած միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել «Հայաստան» կուսակցությունների դաշինքի ներկայացուցչի կողմից Ազգային ժողովի ընտրություններին իրենց կուսակցության օգտին քվեարկելու պայմանով ընտրակաշառք տալու, ինչպես նաև օրենսդրական արգելքի պայմաններում նշված կուսակցությունների դաշինքի պատգամավորի և «Բարգավաճ Հայաստան» կուսակցության թեկնածուի կողմից միջնորդավորված եղանակով բարեգործության արգելքը խախտելու տարբեր դեպքերի մասին: Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են խուզարկություններ և վարութային այլ գործողություններ: https://www.anticorruption.am/hy/post/ntarakashark-talu-yev-baregortsutyan-argelk-khakhtelu-hertakan-depkern-en-batsahaytvel

22. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի և ՀՀ ազգային անվտանգության ծառայության Շիրակի մարզային վարչության ծառայողների կողմից իրականացված միջոցառումների արդյունքում Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության անդամ, պատգամավորի թեկնածու հանդիսացող և նույն կուսակցության անունից հանդես եկող անձը կուսակցության օգտին քվեարկելու, ինչպես նաև ընտրակաշառքի դիմաց հիշյալ կուսակցության ընտրելու պատրաստակամ անձանց հավաքագրելու պայմանով մի շարք ընտրողների տվել է ընտրակաշառք: Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով հարուցվել են հանրային քրեական հետապնդումներ, ձերբակալվել են անձինք, կատարվել են խուզարկություններ և վարութային այլ գործողություններ: https://www.anticorruption.am/hy/post/ntroghnerin-kashark-talu-hertakan-depkern-en-batsahaytel

23. Հակակոռուպցիոն կոմիտեի և ՆԳՆ քրեական ոստիկանության Կոտայքի մարզային վարչության ծառայողների կողմից իրականացված միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի տարածքային գրասենյակի ղեկավարը կուսակցության օգտին քվեարկելու պայմանով նույն համայնքի բնակչին խոստացել, ինչպես նաև տվել է ընտրակաշառք:

Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են մեղադրյալներ, կատարվել խուզարկություններ և վարութային այլ

գործողություններ: https://www.anticorruption.am/hy/post/hh-hakakoruptsion-komitei-koghmits-batsahaytvel-en-ntrakashark-talu-yev-stanalu-depker

24. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների կողմից իրականացված միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել «Ուժեղ Հայաստան» կուսակցության ներկայացուցչի կողմից այլ անձանց հետ արտերկրում բնակվող ՀՀ քաղաքացիներին Ազգային ժողովի ընտրություններին իրենց կուսակցության օգտին քվեարկելու պայմանով ընտրակաշառք տալու և Հայաստան տեղափոխելու մասին:

Դեպքի առթիվ Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով կատարվել են մի շարք վարութային գործողություններ, դատարան են ներկայացվել կալանքի միջնորդություններ: https://www.anticorruption.am/hy/post/ntrakashark-statsats-68-amya-tghamard-datarani-oroshmamb-kalanavorvel-e

25. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի և ՆԳՆ քրեական ոստիկանության Կոտայքի մարզային վարչության ծառայողների կողմից իրականացված միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության Աբովյան համայնքի տարածքային գրասենյակի պատասխանատուն, հիշյալ կուսակցության անդամների և նրանց հետ համագործակցող մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ մի շարք ընտրողների խոստացել, ինչպես նաև տվել է ընտրակաշառք:

Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են խուզարկություններ և վարութային այլ գործողություններ: https://www.anticorruption.am/hy/post/batsahatvel-en-ntrakashark-talu-yev-stanalu-nor-depker

26. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի և ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից իրականացված միջոցառումների հիման վրա Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված վարույթով փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության ներկայացուցիչն այլ անձանց հետ Ազգային ժողովի ընտրություններին իրենց կուսակցության օգտին քվեարկելու պայմանով Շիրակի մարզի մի շարք ընտրողների տվել են ընտրակաշառք: Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են վարութային գործողություններ: https://www.anticorruption.am/hy/post/hakakoruptsion-komitei-tsarayogher-batsahaytel-ntrakashark-talu-hertakan-depker

27. Հակակոռուպցիոն կոմիտեի և ՆԳՆ քրեական ոստիկանության Լոռու մարզային վարչության ծառայողների կողմից իրականացրած միջոցառումների արդյունքում Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գրասենյակի պատասխանատուն այլ անձանց հետ Ազգային ժողովի ընտրություններին իրենց կուսակցության օգտին քվեարկելու պայմանով մի շարք ընտրողների տվել են ընտրակաշառք: Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են խուզարկություններ և վարութային այլ գործողություններ:

https://www.anticorruption.am/hy/post/batsahaytvel-en-ntrakashark-talu-stanalu-hertakan-depker-2

28. **Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից** իրականացված օպերատիվ–հետախուզական միջոցառումների հիման վրա նախաձեռնված վարույթով փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության անունից հանդես եկող մի խումբ անձինք, ԱԺ ընտրություններին նույն կուսակցության օգտին քվեարկելու և նախընտրական քարոզչություն իրականացնելու պայմանով, ընտրելու իրավունք ունեցող մի շարք քաղաքացիների խոստացել, ինչպես նաև տվել են ընտրակաշառք՝ գործընթացը քողարկելով կուսակցության տարածքային գրասենյակներում նշված անձանց կաշառք–գումարը աշխատավարձի տեսքով վճարելու անվան տակ: Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են խուզարկություններ և վարութային այլ գործողություններ: https://www.anticorruption.am/hy/post/ntrakashark-talu-yev-stanalu-hertakan-depkern-en-batsahaytvel-hakakoruptsion-komitei-koghmits-2-andz-kalanavorvel-e

29. **ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի** ծառայողների կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության Սյունիքի մարզի Գորիս համայնքի տարածքային պատասխանատուն կուսակցության օգտին քվեարկելու պայմանով նույն համայնքի մի շարք ընտրողների խոստացել, ինչպես նաև տվել է ընտրակաշառք:

Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ, կատարվել են խուզարկություններ և վարութային այլ գործողություններ: https://www.anticorruption.am/hy/post/hakakoruptsion-komitei-koghmits-batsahaytvel-en-ntrakashark-talu-stanalu-nor-depker

30. **ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի** կողմից բացահայտված ընտրական հանցագործությունների վերաբերյալ քննվող քրեական վարույթով փաստական տվյալներ են ստացվել առ այն, որ արտերկիր աշխատանքի մեկնած ՀՀ մի շարք քաղաքացիների նկատմամբ ունեցած նյութական կախվածությունն օգտագործելով Ռուսաստանի Դաշնությունում բիզնես գործունեություն իրականացնող անձինք «Ուժեղ Հայաստան» կուսակցության համակրի և այլ անձանց հետ նախապատրաստել են վերջիններին տեղափոխել Հայաստանի Հանրապետություն՝ հարկադրելով մասնակցել Ազգային ժողովի ընտրություններին և քվեարկել իրենց նշած կուսակցության օգտին:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն հորդորում է բոլոր քաղաքացիներին, այդ թվում՝ արտերկրում բնակվող մեր հայրենակիցներին, խստորեն պահպանել ընտրական օրենսդրության պահանջները, բացառել ընտրողների կամքի վրա ցանկացած անօրինական ներգործություն և ձեռնպահ մնալ ընտրական գործընթացի բնականոն ընթացքը խաթարող գործողություններից:

Կոմիտեն հավաստիացնում է, որ իրականացնելու է բոլոր տեղեկությունների համակողմանի և խիստ ստուգում, ինչպես նաև ձեռնարկելու է օրենքով նախատեսված բոլոր միջոցները՝ հանցավոր արարքների լիարժեք բացահայտումն ապահովելու համար՝

անկախ դրանց կատարման վայրից և ներգրավված անձանց շրջանակից: https://www.anticorruption.am/hy/post/kaghakatsinerin-ntrutyunnerin-masnaktselun-harkadrelu-depker-en-batsahaytvel

31. ՀՀ **հակակոռուպցիոն կոմիտեի** ծառայողների կողմից իրականացրած միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ներկայացուցիչները Ազգային ժողովի ընտրություններին իրենց կուսակցության օգտին քվեարկելու և համակիրներ հավաքագրելու պայմանով Տավուշի մարզի մի շարք ընտրողների տվել են ընտրակաշառք:

Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են վարութային գործողություններ: https://www.anticorruption.am/hy/post/hakakoruptsion-komitei-tsarayoghner-batsahaytel-en-ntrakashark-stanalu-nor-depker

32. ՀՀ **ազգային անվտանգության ծառայության** կողմից իրականացրած միջոցառումների հիման վրա Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված վարույթով փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության համակիրը նույն կուսակցության Շիրակի մարզի Անի համայնքի պատասխանատուի և այլ անձանց հետ Ազգային ժողովի ընտրություններին իրենց կուսակցության օգտին քվեարկելու պայմանով մի շարք ընտրողների տվել է 70–ից 200.000 ՀՀ դրամի չափով ընտրակաշառք:

Խմբի անդամներն իրենց հանցավոր գործունեությանն օրինական տեսք հաղորդելու նպատակով ընտրակաշառք ստացող անձանց փաստաթղթավորել են որպես նախընտրական ակտիվիստներ, կամավորներ և տարածքային պատասխանատուներ՝ նրանց վճարելով ոչ թե փաստացի կատարված աշխատանքի, այլ ընտրություններին նախապես պայմանավորված ձևով քվեարկելու խոստման դիմաց:

Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են խուզարկություններ և վարութային այլ գործողություններ:

Կոմիտեն հորդորում է զերծ մնալ ընտրակաշառք տալու և այդ հանցավոր գործունեությունը տարբեր ձևական մեխանիզմներով քողարկելու արատավոր գործելակերպից՝ նախազգուշացնելով, որ նման յուրաքանչյուր դեպք արժանանալու է խիստ իրավական արձագանքի: https://www.anticorruption.am/hy/post/batsahaytvel-en-ntrakashark-talu-stanalu-hertakan-depker

33. ՀՀ **հակակոռուպցիոն կոմիտեի** ծառայողների կողմից իրականացրած միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության Լոռու մարզի Ալավերդի քաղաքի գրասենյակների պատասխանատուն այլ անձանց հետ Ազգային ժողովի ընտրություններին իրենց կուսակցության օգտին քվեարկելու պայմանով մի շարք ընտրողների տվել են ընտրակաշառք:

Իրենց հանցավոր գործունեությունը քողարկելու նպատակով ընտրակաշառք ստացող քաղաքացիներին վճարված գումարները ներկայացվել են որպես կուսակցության տարբեր

գրասենյակներում որևէ հաստիքի ձևակերպված լինելու պայմաններում վճարվող աշխատավարձ: Այնինչ, հիշյալ քաղաքացիները ոչ միայն գրանցված չեն եղել որպես աշխատակից, այլ նաև իրենց կամ իրենց ընտանիքի անդամների քվեներն ապահովելուց զատ, որևէ աշխատանք չեն կատարել:

Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են խուզարկություններ և վարութային այլ գործողություններ: https://www.anticorruption.am/hy/post/ntrakashark-talu-stanalu-hertakan-depker-en-batsahaytvel

34. Ընտրակաշառք տալու, ստանալու, բարեգործության արգելքը խախտելու և անձի ընտրական իրավունքի ազատ իրականացումը խոչընդոտելու դեպքերի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով փաստական տվյալներ են ստացվել նաև նախկին, այդ թվում՝ վիրավորում ստացած զինվորականների կողմից 2026 թվականի ապրիլին Երևան քաղաքում տեղի ունեցած հավաքին մասնակցելու նպատակով վերջիններիս նյութապես շահագրգռելու, ինչպես նաև զինվորականի սպանություն կատարելու առերևույթ հանցանքների վերաբերյալ:

Հակակոռուպցիոն կոմիտեն շարունակելու է հետևողական միջոցներ ձեռնարկել նմանօրինակ դրսևորումները բացահայտելու, կանխելու և ենթադրյալ հանցանք կատարած անձանց օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: https://www.anticorruption.am/hy/post/batsahaytvel-en-ntrakashark-talu-stanalu-baregortsutyan-argelk-khakhtelu-hertakan-depker

35. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների կողմից բացահայտվել են ընտրակաշառք տալու, ստանալու, բարեգործության արգելքը խախտելու և անձի ընտրական իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտելու հերթական դեպքերը: Մասնավորապես՝ պարզվել է, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության թեկնածուի կազմակերպմամբ մի շարք անձինք օրենսդրական արգելքի պայմաններում տվել են ՀՀ Լոռու մարզի մի շարք ընտրողների բնակարանների վարձավճարները:

Խմբի անդամները, բացահայտումից խուսափելու և իրենց գործողությունների հետագծելիությունը նվազեցնելու նպատակով, օգտագործել են միջնորդավորված անձանց և նրանց պատկանող ավտոմեքենաները, գումարները տրամադրել են հիմնականում կանխիկ եղանակով, դրանց ստացման և բաժանման գործընթացում ներգրավել են իրենց հետ փոխկապակցված ընկերությունների աշխատողներին ու նրանց շրջապատի անձանց, իսկ դրամական միջոցների շարժի վերահսկումը դժվարացնելու նպատակով ծրագրել են ֆինանսական գործառնությունների համար օգտագործել ռուսական բանկային քարտեր:

Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են խուզարկություններ և վարութային այլ գործողություններ: https://www.anticorruption.am/hy/post/hakakakoruptsion-komitei-tsarayoghneri-koghmits-batsahaytvel-en-ntrakashark-talu-stanalu-baregortsutyan-argelk-khakhtelu-nor-depker-1

36. **ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի և ազգային անվտանգության ծառայության** աշխատակիցների կողմից համատեղ ձեռնարկված միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության ՀՀ Լոռու մարզում գործող մի շարք գրասենյակների համակարգողներ 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին իրենց օգտին քվեարկելու դիմաց նախապատրաստել են մի շարք ընտրողների տալ ընտրակաշառք, ինչպես նաև խոչընդոտել նույն մարզի մի շարք բնակիչների ընտրական իրավունքի ազատ իրականացմանը:

Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են խուզարկություններ և վարութային այլ գործողություններ: https://www.anticorruption.am/hy/post/ntrakashark-talu-yev-kaghakatsineri-ntrakan-iravunki-azat-irakanatsman-khoch-ndotelu-nakhapatrastman-depker-en-batsahaytvel

37. **ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների կողմից** իրականացված միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Հայաստան» կուսակցությունների դաշինքի աջակից և նույն դաշինքի Սպիտակ բնակավայրում գործող գրասենյակի ղեկավարը ՀՀ նախագահի՝ ՀՀ Ազգային ժողովի հերթական ընտրությունները նշանակելու մասին հրամանագրի՝ 2026 թվականի փետրվարի 7-ին ուժի մեջ մտնելուց հետո՝ բարեգործություն իրականացնելու օրենսդրական արգելքի պայմաններում, ընտրող հանդիսացող ՀՀ Լոռու մարզի բնակչին անհատույց տրամադրել է դրամական միջոց:

Բացի այդ, այլ անձանց հետ խոչընդոտել է նույն մարզի բնակչի ընտրական իրավունքի ազատ իրականացմանը, որը դրսևորվել է վերջինիս նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով:

Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են խուզարկություններ և վարութային այլ գործողություններ:

Հակակոռուպցիոն կոմիտեն տեղեկացնում է, որ ընտրական գործընթացների օրինականության ապահովումը շարունակում է մնալ որպես առաջնահերթություն, և ընտրական բնույթի բոլոր իրավախախտումները գտնվում են Կոմիտեի ամենօրյա ուշադրության կենտրոնում՝ հիշեցնելով, որ ընտրակաշառք տալու և ստանալու համար նախատեսված է 7-ից մինչև 8 տարվա ազատազրկում: Հորդորում ենք զերծ մնալ ընտրական գործընթացի նկատմամբ ցանկացած ապօրինի ներգործությունից՝ ապահովելով քաղաքացիների ազատ կամարտահայտման իրավունքը: https://www.anticorruption.am/hy/post/batsahaytvel-en-baregortsutyan-argelki-khakhtman-yev-andzi-ntrakan-iravunki-azat-irakanatsman-khoch-ndotelu-depker

38. **ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների** կողմից իրականացված օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Մեր ձնով» ազգային արժեքների պահպանության հասարակական կազմակերպության գրասենյակի ղեկավարը Ազգային ժողովի ընտրությունների ընթացքում «Ուժեղ Հայաստան» կուսակցության օգտին քվեարկելու պայմանով ընտրելու իրավունք ունեցող մի շարք քաղաքացիների տվել է ընտրակաշառք:

Բացի այդ, նույն անձը ԱԺ ընտրությունների նշանակման որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը, բարեգործության անվան տակ, ընտրող հանդիսացող Երևան քաղաքի բնակչին վիրահատության համար անհատույց տվել է գումար:

Դեպքի առթիվ Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են խուզարկություններ և վարութային այլ գործողություններ: https://www.anticorruption.am/hy/post/batsahaytvel-en-mi-shar-kaghakatsineri-ntrakashark-talu-yev-baregortsutyan-argelk-khakhtelu-hertakan-depker

39. ՀՀ **հակակոռուպցիոն կոմիտեի** ծառայողների կողմից իրականացրած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի տարածքային պատասխանատուն կուսակցության օգտին քվեարկելու պայմանով նույն համայնքի մի շարք ընտրողների խոստացել, ինչպես նաև տվել է ընտրակաշառք:

Բացի այդ, նույն անձը Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի մի շարք բնակիչների նյութապես շահագրգռելու եղանակով ապահովել է նրանց մասնակցությունը նշված կուսակցության հանրահավաքներին:

Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են խուզարկություններ և վարութային այլ գործողություններ: https://www.anticorruption.am/hy/post/hh-hakakoruptsion-komitei-koghmits-batsahaytvel-en-ntrakashark-talu-stanalu-inchpes-nayev-havakin-masnaktselu-npatakov-andzants-nyutapes-shahagrgrelu-depker

40. ՀՀ **հակակոռուպցիոն կոմիտեի** ծառայողների կողմից իրականացրած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության Շիրակի մարզի Անի համայնքի տարածքային պատասխանատուն, իր մերձավոր ազգականների և այլ անձանց հետ 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք Ազգային ժողովի ընտրություններին իրենց կուսակցության օգտին քվեարկելու պայմանով մի շարք ընտրողների խոստացել, ինչպես նաև տվել են ընտրակաշառք՝ գործընթացը քողարկելով նշված անձանց կուսակցության տարածքային գրասենյակներում որպես պատասխանատու կամ ակտիվիստ ձևակերպելու և կաշառք–գումարը աշխատավարձի տեսքով վճարելու անվան տակ:

Բացի այդ, «Ուժեղ Հայաստան» կուսակցության անունից հանդես եկող անձը նյութապես շահագրգռելու, ինչպես նաև քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ պահպանող անձանց անունից տրված պահանջին չենթարկվելու հետևանքներով վախեցնելու սպառնալիքով փորձել է խոչընդոտել մի շարք ընտրողների ընտրական իրավունքի ազատ իրականացմանը:

Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են խուզարկություններ և վարութային այլ

գործողություններ: https://www.anticorruption.am/hy/post/hakakoruptsion-komitei-koghmits-batsahaytvel-en-ntrakashark-talu-yev-stanalu-hertakan-depker

41. **ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում** իրականացվող քրեական վարույթով բացահայտվել են ընտրակաշառք տալու, ստանալու և անձանց ընտրական իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտելու դեպքեր:

Մասնավորապես, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության Սյունիքի մարզային վարչության ծառայողների հետ համատեղ իրականացրած միջոցառումների և դատավարական գործողությունների արդյունքում փաստական տվյալներ են ստացել այն մասին, որ Ռուսաստանի Դաշնության Օրենբուրգ քաղաքում բնակվող ազգությամբ հայ գործարարի կազմակերպմամբ վերջինիս մերձավոր շրջապատի անձինք 2026 թվականի հունիսի 7–ին կայանալիք ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին «Ուժեղ Հայաստան» կուսակցության օգտին քվեարկելու պայմանով մի շարք ընտրողների պարտք-գումարի մասը գիջելու, աշխատանքի ընդունելու և այլ եղանակով խոստացել են տալ կաշառք:

Բացի այդ, նույն անձինք փորձել են խոչընդոտել Սյունիքի մարզի Սիսիան համայնքի մի շարք բնակիչների ընտրական իրավունքի ազատ իրականացմանը, որը դրսևորվել է վերջիններիս նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով:

Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են խուզարկություններ և վարութային այլ գործողություններ:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն հորդորում է բոլոր քաղաքացիներին կաշառքի առաջարկի կամ այլ իրավախախտման վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում, այդ թվում՝ անանուն եղանակով, անհապաղ դիմել Կոմիտե՝ տեղեկացնելով, որ քաղաքացու տվյալների գաղտնիությունը երաշխավորվում է օրենքով: https://www.anticorruption.am/hy/post/batsahaytvel-en-ntrakashark-talu-stanalu-yev-andzi-ntrakan-iravunki-azat-irakanatsman-khoch-ndotelu-depker

42. **ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահն օրենսդրական փոփոխություններ նախաձեռնելու միջնորդությամբ դիմել է ՀՀ արդարադատության նախարարին.** Կարևորելով ընտրական գործընթացների օրինականության ապահովումը՝ Կոմիտեում նախնական ամփոփվել է 2026 թվականի Ազգային ժողովի ընտրություններին նախորդող ժամանակահատվածում բացահայտված կոռուպցիոն բնույթի ընտրական հանցագործությունների դեպքերի առթիվ իրականացվող վարույթների տվյալները, վեր են հանվել այդ հանցագործությունների դրսևորման մեխանիզմները և դրանց կատարմանը նպաստող հանգամանքները, որոնց հիման վրա ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը դիմել է ՀՀ արդարադատության նախարարին՝ միջնորդելով՝ հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու նպատակով նախաձեռնել այնպիսի օրենսդրական փոփոխություններ, որոնք հետայսու նվազագույնի կհասցնեն բացահայտված հանցավոր սխեմաների կիրառման հնարավորությունը, այդ թվում՝ այդպիսի սխեմաներում ներգրավված քաղաքական ուժերի մասնակցությունն ընտրական գործընթացներին արգելելու եղանակով: https://www.anticorruption.am/hy/post/hh-

hakakoruptsion-komitei-nakhagahn-orensdrakan-popokhutyunner-nakhadzernelu-mijnordutyamb-dimel-e-hh-ardaradatutyan-nakhararin

Ամբողջական գրությունը կցվում է: https://www.anticorruption.am/uploads/34916cbf8ac3f73591d15225f5d806d9-%D5%86%D5%B5%D5%B8%D6%82%D5%A9.pdf

43. Համաձայն ՀՀ դատախազությունում ստացված և մշակված տվյալների՝ 2026 թվականի փետրվարի 7-ից՝ Ազգային ժողովի հերթական ընտրությունների գործընթացի մեկնարկից մինչև հունիսի 7-ը՝ ժամը 24:00-ն, նախաքննություն իրականացնող մարմիններում ընդհանուր ստացվել է ընտրական գործընթացին խոչընդոտող առերևույթ հանցանքների վերաբերյալ 599 հաղորդում: 599 հաղորդումներից՝ 210-ով նախաձեռնվել է քրեական վարույթ: 349 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում: 14 քրեական վարույթ՝ 42 անձի վերաբերյալ, հաստատված մեղադրական եզրակացությամբ, հանձնվել է իրավասու դատարան: Պատգամավորի 13 թեկնածուների վերաբերյալ Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացվել քրեական հետապնդում հարուցելու և ազատությունից զրկելու համաձայնություն ստանալու վերաբերյալ միջնորդություններ, որոնցից 12-ի վերաբերյալ միջնորդությունները բավարարվել են, 1 անձի վերաբերյալ միջնորդությունը կքննարկվի առաջիկայում: Ձերբակալվել է պատգամավորի թեկնածու Կ.Ե.-ն: Անանուն հաղորդում ներկայացնելու azdararir.am կայքի միջոցով ստացվել է 16 հաղորդում: https://www.prosecutor.am/article/5362

44. 2026 թվականի փետրվարի 7-ից՝ Ազգային ժողովի հերթական ընտրությունների գործընթացի մեկնարկից առ այսօր դատախազները, հաստատված մեղադրական եզրակացությամբ, իրավասու դատարան են հանձնել ընտրական հանցագործությունների վերաբերյալ 17 քրեական վարույթ՝ 60 անձի վերաբերյալ, որոնցից 12 քրեական վարույթ՝ 51 անձի վերաբերյալ, դատարան է հանձնվել ՀՀ գլխավոր դատախազության Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազների կողմից: https://www.prosecutor.am/article/5368

45. Հունիսի 8-ին՝ ժամը 10:00-ի դրությամբ, ՆԳՆ ստացվել է 619 ահազանգ, որոնց մեջ ներառված են ինչպես տեղեկատվական, այնպես էլ ստուգման ենթակա զանգեր: Արձանագրվել է կրկնաքվեարկության՝ 52, քվեարկության գաղտնիության խախտման՝ 27, ընտրական իրավունքի իրականացմանը խոչընդոտելու՝ 9, ընտրակաշառք տալու՝ 4, ընտրական գործընթացներին խոչընդոտելու՝ 2, ընտրատեղամասում սառը զենք կրելու, խուլիգանության և ֆիզիկական ներգործության 1-ական դեպքեր, որոնցով կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին: Ձերբակալվել է 18 անձ: Ենթադրյալ իրավախախտումների վերաբերյալ ստացված 322 տեղեկությունները ստուգման փուլում են: Ընտրողների լրացուցիչ ցուցակներում ընդգրկվելու մասին դիմում է ներկայացրել 2435 անձ, տեղեկանք է ստացել 1172-ը: Ընտրություններին մասնակցելու համար համայնքներում ժամանակավորապես տրվող անձը հաստատող փաստաթուղթ (ձև 9) ստացել է 1221 անձ: ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունում գործող «Զանգերի կենտրոնում» (84-22) ընտրությունների կազմակերպման և անցկացման

վերաբերյալ ստացվել է 1725 զանգ: ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության բաժիններում և ՆԳՆ շրջիկ սպասարկման գրասենյակներում խորհրդատվություն է տրամադրվել 1745 քաղաքացու: https://mia.gov.am/2026/06/08/elections-20/

46. Հունիսի 7-ին ՆԳՆ-ում ստացվել է ահազանգ, որ Գյումրիի մի ընտրատեղամասի դիմաց քաղաքական ուժերից մեկի շտաբի ներկայացուցիչները ընտրակաշառք են բաժանում: ՆԳՆ ոստիկանության օպերատիվ խմբերն անմիջապես մեկնել են նշված հասցե և ընտրակաշառք տալու կասկածանքով ձերբակալել և Քրեական ոստիկանության Շիրակի մարզային վարչություն են տեղափոխել երեք անձի: Հայտնաբերվել են ընտրողների ցուցակներ: Հանգամանքները պարզվում են: https://police.mia.gov.am/articles/news/ntrakasharq

47. Հունիսի 7-ին ՀՀ ԱԱԾ Լոռու ՄՎ-ում տեղեկություններ են ստացվել, որ **Վրաստանի Հանրապետության անցակետից դեպի Վանաձոր քաղաք է ընթանում «Հոնդայի» ավտոմեքենա, որի ուղևորները գումար են տեղափոխում ընտրակաշառք տալու համար:** Փամբակ գյուղի վարչական տարածքում կանգնեցվել է «Հոնդայի» ավտոմեքենան և տեղափոխվել ոստիկանության Գուգարքի բաժին, որտեղ վարորդը և 9 ուղևորը ներկայացրել են իրենց մոտ առկա **ընդհանուր 7.300.000 ռուբլի գումարը** և հայտարարել, որ գումարը բերում են Վրաստանի Հանրապետությունից, այն գոյացել է ավտոմեքենաների վերանորոգումից, առքուվաճառքից: Փաստաթղթերը ներակայացվել են Հակակոռուպցիոն կոմիտե:

48. Հունիսի 7-ին ՀՀ ՆԳՆ Շիրակի ՄՎ է զանգահարել անհայտ քաղաքացի և հայտնել, որ Գյումրիի Լազոյի փողոցի 3-րդ տանը անհայտ անձինք **ընտրակաշառք են բաժանում և ուղղորդում են** Գյումրի քաղաքի թիվ 32/38 ընտրատեղամաս: Պարզվել է, որ նշված տունը ծառայում է որպես **«Ուժեղ Հայաստան»** կուսակցության գրասենյակ, որտեղից ընտրակաշառք տալու կասկածանքով ձերբակալվել են Մերուժան Սարգսյանը (թիվ 32/38 ընտրատեղամասում «Ուժեղ Հայաստան» կուսակցության վստահված անձ), Նորայր Սարգսյանը և Ավետիք Կիրակոսյանը:

49. Ս.թ. հունիսի 9-ին ՀՀ ՔԿ Մարտունու քննչական բաժնից ստացվել է քր. վարույթ նախաձեռնելու մասին արձանագրությունը, համաձայն որի «ՄԻՌ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ն /հիմնադիր՝ Սուրիկի Ավետիսյանը 2022-2024 թթ. ընթացքում զբաղվել է շինանյութի մեծածախ առևտրով և նշված ժամանակահատվածի գործունեության համար ՀՀ պետական բյուջեի հանդեպ ունեցել է 16.780.309 ՀՀ դրամի հարկային պարտավորություններ: Ընկերությունը 2023թ. սնանկության դատարանի վճռով ճանաչվել է սնանկ, սակայն պարզվել է, որ ընկերությունն իրական հնարավորություն է ունեցել կատարել հարկային պարտավորությունները ու չի կատարել, ինչի արդյունքում **պետությանը պատճառվել է 16.780.309 ՀՀ դրամի վնաս:**

50. Հունիսի 9-ին ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչությունից ստացվել է գրություն, որ հունիսի 7-ին Լոռու մարզի դատախազությունից գրություն է ստացվել, որ հունիսի 3-ին Վանաձոր քաղաքում գտնվող **Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի գրասենյակի նախագահ Արթուր Ալբերտի Սաքունցի** գրասենյակի +37477342267 հ/ն-ին և Info@hcv.am էլ. հասցեին անհայտ քաղաքացին տարբեր հ/հ-ներով զանգահարել և

հաղորդագրություն է ուղարկել գործող իշխանություններին չընտրելու վերաբերյալ և սպառնալիքներ հնչեցրել իր և իր ընտանիքի անդամների հասցեին: Նախաձեռնվել է քր. վարույթ: Նախաքննությունը շարունակվում է:

51. Հունիսի 12-ին **ՆԳՆ ոստիկանության ՔՈԳՎ Լոռու ՄՎ-ում** տվյալներ են ձեռք բերվել, որ «ՈՒժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի կողմից հունիսի 3-ին Երևան քաղաքում կազմակերպված հավաքին մասնակցելու նպատակով «ՈՒժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի ղեկավար կամ այլ անձինք նույն դաշինքի աջակից՝ Կամո Կարապետյանի /Սպիտակ համայնք, Ջրաշեն բնակավայր/ և ինքնությունը չպարզված անձի օժանդակությամբ Լոռու մարզի 28 բնակիչների, այդ թվում Հրաչիկ Ասոյանի / Սպիտակ համայնք, Ջրաշեն բնակավայր/ յուրաքանչյուրին տրամադրել է 5000 դրամ, անձանց նյութապես շահագրգռել են մասնակցել օրինական հավաքին: Կ. Կարապետյանը ձերբակալվել է: Հ. Ասոյանից ընդունվել է հաղորդում:

52. **ՀՀ ՆԳՆ ոստիկանություն** տվյալներ են ստացել, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության օգտին քվեարկություն ապահովելու նպատակով նախապատրաստվել է ընտրակաշառքի բաժանում: Ըստ նյութերի՝ Երվանդ Բասենցյանը Մարտին Մանասյանին և Կարեն Դավթյանին փոխանցել է 7.5 մլն դրամ, որից 6.7 մլն դրամը նախատեսված էր 45 ընտրողների միջև բաշխելու համար: Փաստի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ: Վարույթի շրջանակում մի շարք անձինք ձերբակալվել են:

53. **ՀՀ ՆԳՆ Ոստիկանություն** տեղեկություններ են ստացվել, որ հունիսի 7-ին կայացած ՀՀ ԱԺ ընտրությունների ժամանակ Լոռու մարզում գտնվող թիվ 25/20 ընտրատեղամասում «ՈՒժեղ Հայաստան» կուսակցության կողմից որպես վստահված անձ հանդիսացող Մայիս Ասուլյանը, վերջինիս որդին՝ Գառնիկ Ասուլյանը և ընկերը՝ Արարատ Վարոսյանը, նախնական հանցավոր համաձայնությամբ, նշված ընտրատեղամասի բակում տարբեր ժամանակահատվածներում մոտենալով նշված օրը քվեարկության մասնակից տարբեր անձանց՝ ուղղորդել, համոզել են, որպեսզի քվեարկեն «ՈՒժեղ Հայաստան» կուսակցության օգտին: Մ. Ասուլյանը ձերբակալվել է:

54. **«Ուժեղ Հայաստան»-ի պատգամավորի թեկնածուներից 2-ը կալանավորվել են, 4-ի նկատմամբ հայտարարվել է հետախուզում.** ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության ընդհանուր բնույթի և ընտրական հանցագործությունների քննության վարչությունում բազմաթիվ անձանց նյութապես շահագրգռելու և առանձնապես խոշոր չափերով փողերի լվացման վերաբերյալ քրեական վարույթի նախաքննության ընթացքում «Ուժեղ Հայաստան»-ի պատգամավորի թեկնածուներից 6-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 46-236-րդ հոդվածի 2-րդ մասով և 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով: Քրեական վարույթի նախաքննության ընթացքում 2-ը կալանավորվել են, իսկ 4-ի վերաբերյալ կայացվել է կալանավորման որոշում, հայտարարվել հետախուզում: https://www.investigative.am/news/37188

55. **«Ուժեղ Հայաստան»-ի պատգամավորի թեկնածուներից 2-ը կալանավորվել են.** ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության

ընդհանուր բնույթի և ընտրական հանցագործությունների քննության վարչությունում բազմաթիվ անձանց նյութապես շահագրգռելու և առանձնապես խոշոր չափերով փողերի լվացման վերաբերյալ քրեական վարույթի նախաքննության ընթացքում «Ուժեղ Հայաստան»-ի պատգամավորի թեկնածուներից 6-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 46-236-րդ հոդվածի 2-րդ մասով և 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով: Վերջիններիս վերաբերյալ կայացվել են ձերբակալման որոշումներ, որոնց կատարումը հանձնարարվել է ՆԳՆ ոստիկանությանը: Նախաքննության ընթացքում թեկնածուներից 2-ը հայտնաբերվել են և նրանց նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը: Քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է: https://www.investigative.am/news/37177

56. **Խուզարկությամբ հայտնաբերվել է Տաշիր համայնքի Սարատովկա բնակավայրի ղեկավարին պատկանող ապօրինի ռազմամթերք. քրեական վարույթի նախաքննությունն ավարտվել է.** ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում ավարտվել է Տաշիր համայնքի Սարատովկա բնակավայրի վարչական ղեկավարին պատկանող ռազմամթերքի ապօրինի շրջանառության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը: Մասնավորապես՝ Սարատովկա բնակավայրի վարչական ղեկավար Գ.Մ.-ի բնակարանի և օժանդակ շինությունների խուզարկությամբ հայտնաբերվել են ինքնաձիգի չկրակված փամփուշտներ: Քրեական վարույթի նախաքննության ընթացքում Գ.Մ.-ի նկատմամբ հսկող դատախազի որոշմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասով (ռազմամթերքի ապօրինի շրջանառությունը): Նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է տնային կալանքը: Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին՝ այն հաստատելու և քննության առնելու համար դատարան ուղարկելու միջնորդությամբ: https://www.investigative.am/news/37172

57. **2026 թվականի հունիսի 7-ի՝ ժամը 20:00-ի դրությամբ ընտրական հանցագործությունների վերաբերյալ նախաձեռնվել է 59 քրեական վարույթ.** ՀՀ քննչական կոմիտեի ստորաբաժանումներում միայն 2026 թվականի հունիսի 7-ի՝ ժամը 20:00-ի դրությամբ ընտրական հանցագործությունների վերաբերյալ նախաձեռնվել է 59 քրեական վարույթ, որից 43-ը՝ մարզային քննչական ստորաբաժանումներում, 16-ը՝ Երևան քաղաքի քննչական ստորաբաժանումներում: Այսպես՝ **ՀՀ քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածով** (ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելը) նախաձեռնվել է **9 քրեական վարույթ**: **ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածով** (մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը) նախաձեռնվել է **30 քրեական վարույթ**: **ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով** (քվեարկության գաղտնիությունը խախտելը) նախաձեռնվել է **17 քրեական վարույթ**: **ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածով** (ահաբեկչության մասին սուտ տեղեկություններ տարածելը) նախաձեռնվել է **3 քրեական վարույթ**: Քրեական վարույթների շրջանակում ձերբակալվել է 9 անձ: https://www.investigative.am/news/37170

58. **Ընտրության ժամանակ մի խումբ անձանց ուղղորդելու դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ.** ՀՀ քննչական կոմիտեում ստացված առերևույթ հանցանքի մասին հաղորդման համաձայն՝ «Ուժեղ Հայաստան»-ի վստահված անձ Ա.Հ.-ն մի խումբ անձանց ուղղորդել է ընտրել տվյալ համարի ներքո հանդես եկող կուսակցությանը: Ա.Հ.-ն հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ՆԳՆ ոստիկանության ծառայողների կողմից ձերբակալվել է: ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասով (ընտրական իրավունքի իրականացումը, ընտրությանը մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելը): Կատարվում է նախաքննություն: https://www.investigative.am/news/37169

59. **Համատիրության նախագահը ընտրողների ցուցակով մոտեցել է քվեարկությանը մասնակցած քաղաքացիներին. խախտվել է գաղտնիությունը.** ՀՀ քննչական կոմիտեում ՀՀ ՆԳՆ-ից ստացված առերևույթ հանցանքի մասին հաղորդման համաձայն՝ 2026 թվականի հունիսի 7-ին համատիրության նախագահ Ա.Գ.-ն ձեռքին ունենալով ընտրողների ցուցակ, Աբովյան քաղաքում գտնվող 29/09 ընտրատեղամասում մոտեցել է քվեարկությանը մասնակցած քաղաքացիներին և քվեարկության հետ կապված նրանց հետ ունեցել է զրույցներ: Ա.Գ.-ն հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ՆԳՆ ոստիկանության ծառայողների կողմից ձերբակալվել է և ներկայացվել վարույթն իրականացնող մարմին: Նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով (քվեարկության գաղտնիությունը խախտելը): Քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է: https://www.investigative.am/news/37168

60. **2026 թվականի ապրիլից մինչև հունիսի 7-ը՝ ժամը 15:00-ի դրությամբ ընտրական հանցագործությունների վերաբերյալ նախաձեռնվել է 117 քրեական վարույթ.** ՀՀ քննչական կոմիտեի ստորաբաժանումներում 2026 թվականի ապրիլից մինչև հունիսի 7-ը՝ ժամը 15:00-ի դրությամբ ընտրական հանցագործությունների վերաբերյալ նախաձեռնվել է 117 քրեական վարույթ, որի շրջանակում հանրային քրեական հետապնդում է հարուցվել 86 անձի նկատմամբ: Այսպես՝ **ՀՀ քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածով** (ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելը) նախաձեռնվել է **8 քրեական վարույթ**: **ՀՀ քրեական օրենսգրքի 211-րդ հոդվածով** (քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելը կամ քարոզչություն կատարելուն այլ կերպ խոչընդոտելը) նախաձեռնվել է **45 քրեական վարույթ**: **ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածով** (մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը) նախաձեռնվել է **6 քրեական վարույթ**: **ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով** (քվեարկության գաղտնիությունը խախտելը) նախաձեռնվել է **6 քրեական վարույթ**: **ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածով** (հավաք անցկացնելուն կամ դրան մասնակցելուն խոչընդոտելը կամ հարկադրելը, ինչպես նաև հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես *շահագրգռելը)*

նախաձեռնվել է 41 **քրեական վարույթ**: **ՀՀ քրեական օրենսգրքի 449-րդ հոդվածով** (պաշտոնատար անձի կարգավիճակ ձեռք բերելուն կամ պահպանելուն խոչընդոտող տեղեկությունները թաքցնելը) նախաձեռնվել է 9 **քրեական վարույթ**: **ՀՀ քրեական օրենսգրքի 218-րդ և 219-րդ հոդվածներով** (ընտրակաշառք ստանալը և ընտրակաշառք տալը) նախաձեռնվել է 1 **քրեական վարույթ**: **ՀՀ քրեական օրենսգրքի 221-րդ հոդվածով** (հանրաքվեի կամ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելը) նախաձեռնվել է 1 **քրեական վարույթ**: 117 քրեական վարույթից 9-ը՝ 16 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Վերը նշված բոլոր քրեական վարույթներով կատարվել են բազմաթիվ ապացուցողական և վարութային գործողություններ, հարցաքննվել՝ շուրջ 1200 անձ, կատարվել շուրջ 280 խուզարկություն: https://www.investigative.am/news/37167

61. **Քվեարկության գաղտնիությունը խախտած վստահված անձը ձերբակալվել է.** ՀՀ քննչական կոմիտեում ստացված առերևույթ հանցանքի մասին հաղորդման համաձայն՝ 2026 թվականի հունիսի 7-ին՝ ժամը 08:15-ին, Հ.Խ.-ն մոտենալով 12/20 ընտրատեղամաս և ստանալով քվեաթերթիկները, մտել է քվեախցիկ, որից հետո հանձնաժողովի անդամին չի ներկայացրել քվեարկության կտրոնը և հայտարարել է, որ այն մոռացել է ընտրախցիկում և որոնելուց չի գտել: Այնուհետև, հանձնաժողովի որոշմամբ նախագահը մտել է խցիկ և ստուգել կտրոնի առկայությունը, որի ընթացքում «Ուժեղ Հայաստան» դաշինքի վստահված անձ Ս.Թ.-ն մոտեցել է ընտրախցիկին և տեսանկարահանել չօգտագործված քվեաթերթիկների համար նախատեսված արկղը և քվեաթերթիկները: Ս.Թ.-ն հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ՆԳՆ ոստիկանության ծառայողների կողմից ձերբակալվել է: ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով (քվեարկության գաղտնիությունը խախտելը): Քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է: https://www.investigative.am/news/37166

62. **Նորաշեն և Մեծավան բնակավայրերում քարոզչությանը խոչընդոտած ևս մեկ անձ ձերբակալվել է.** ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում 2026 թվականի մայիսի 16-ին Նորաշեն և Մեծավան բնակավայրերում «Ուժեղ Հայաստան»-ի մի խումբ աջակիցների կողմից «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչությանը խոչընդոտելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում ևս մեկ անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 211-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (քարոզչություն կատարելուն խոչընդոտելը): Քրեական վարույթի նախաքննության ընթացքում Ս.Ս.-ն ձերբակալվել է և նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան: Հիշեցնենք, որ քրեական վարույթի նախաքննության ընթացքում 12 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում, որից 6-ի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը, իսկ մյուս 6-ի նկատմամբ՝ տնային կալանքը: Քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է: https://www.investigative.am/news/37165

63. **Կրկնակի քվեարկության փորձ կատարած անձը ձերբակալվել է.** ՀՀ քննչական կոմիտեում ՀՀ ՆԳՆ-ից ստացված առերևույթ հանցանքի մասին հաղորդման համաձայն՝ 2026 թվականի հունիսի 7-ին՝ ժամը 08:19-ին, թիվ 20/56 ընտրատեղամասում «Ուժեղ Հայաստան»-ի վստահված անձ Ա.Ս.-ն կատարել է կրկնակի քվեարկության փորձ, որից հետո սարքը «կրկնակի քվեարկության փորձ» գրառմամբ կտրոն է տպել: Ընտրատեղամասի հանձնաժողովի կողմից կտրոնը վերցվել է ԿԸՀ ներկայացնելու համար, որից հետո Ա.Ս.-ն դուրս է հրավիրվել ընտրատարածքից և ներկայացվել է ոստիկանության ծառայողին: Ա.Ս.-ն հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ՆԳՆ ոստիկանության ծառայողների կողմից ձերբակալվել է: Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 44-214-րդ հոդվածի 1-ին մասով (մեկից ավելի անգամ քվեարկելը): Քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է: https://www.investigative.am/news/37164

64. **Կազմակերպության փոխնախագահը ՌԴ-ում ապրող ՀՀ քաղաքացիներին խոստացել է անվճար տեղափոխել ՀՀ՝ ընտրություններին նրանց մասնակցությունն ապահովելու համար. վերջինս ձերբակալվել է.** ՀՀ քննչական կոմիտեում ՀՀ ՆԳՆ ոստիկանությունից ստացված առերևույթ հանցանքի մասին հաղորդման առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում պարզվել է, որ 2026 թվականի մայիսի 31-ին ՌԴ-ից ՀՀ ժամանած «ՌԴ հայկական գործարար խորհրդի» փոխնախագահ Ա.Գ.-ն տելեգրամյան ալիքով հրապարակային եղանակով՝ ՌԴ-ում ապրող ՀՀ քաղաքացիներին խոստացել է անվճար տեղափոխել ՀՀ և հոգալ տեղափոխման հետ կապված բոլոր կազմակերպչական հարցերը՝ հունիսի 7-ին ՀՀ-ում կայանալիք ԱԺ հերթական ընտրություններում նրանց մասնակցությունն ապահովելու նպատակով: Նշված փաստական հանգամանքների հիման վրա Ա.Գ.-ն քննիչի որոշմամբ՝ ՆԳՆ ոստիկանության աշխատակիցների կողմից ձերբակալվել է և ներկայացվել նախաքննական մարմին: Քրեական վարույթի նախաքննության շրջանակում իրականացվում են մի շարք վարութային և ապացուցողական այլ գործողություններ՝ հանցավոր սխեմայում ընդգրկված բոլոր անձանց հայտնաբերելու և նրանց պատասխանատվության ենթարկելու համար: https://www.investigative.am/news/37162

65. **Դանիել Իոաննիսյանի ֆեյսբուքյան գրառումը.** «Ուժեղ Հայաստանի» օգտին ընտրակաշառքի գործերով կա 177* մեղադրյալ, ԲՀԿ-ի օգտին ընտրակաշառքի գործերով կա 55 մեղադրյալ (այս թիվը աճել է, տվյալները մի քանի օրվա են), «Հայաստան դաշինքի» օգտին ընտրակաշառքի գործերով կա 17 մեղադրյալ: Եվ այս ամենը այսբերգի վերևի մասն է, ընտրակաշառքի իրական ծավալների մաքսիմում 1%-ը: Այս ընտրությունները պետք է անվավեր ճանաչվեն ու ամբողջ հանրապետությունում վերաքվեարկություն լինի: Չի կարող լինել խորհրդարան, որի զգալի մասի քվե հավաքելու առանցքային մեխանիզմներից է ընտրակաշառքը: Բայց դե ԿԸՀ-ին մեկ է, ԿԸՀ-ում մոռացել են, որ իրենք են ընտրությունների օրինականությունը վերահսկող սահմանադրական մարմինը:

* - մեղադրյալների թվերի քանակի տեղեկատվության աղբյուրը՝ ՀԿԿ: https://www.facebook.com/plugins/post.php?href=https%3A%2F%2Fwww.facebook.com%2Fdani

oanis%2Fposts%2Fpfbid02iBECVBHbQ7infKXyDEWnJcM4gDNJd6pLi6cyE2XdU9JKzd5Vh2BR5xA62x4onZz2l&show_text=true&width=500

66. ՀՀ ԿԸՀ կողմից 3 տեղամասի քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելուց հետո վերաքվեարկություն չնշանակելու վերաբերյալ. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որևէ տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելուց հետո չպետք է ավտոմատ կերպով նշանակի վերաքվեարկություն: Վերաքվեարկություն չնշանակելու ԿԸՀ որոշումը կայացնելիս պետք է հաշվի առնի ընտրողների իրական կամքի պաշտպանությունը և ընտրությունների արդյունքի օրինականության ապահովումը: ԿԸՀ-ն պետք է ընտրի այն միջոցը, որը տվյալ պայմաններում անհրաժեշտ է, համաչափ է և չի առաջացնում ավելի մեծ աղավաղում, քան այն խախտումը, որի հետևանքը պետք է վերացվի: Վերաքվեարկություն չնշանակելը նման դեպքում չի նշանակում խախտումը անտեսել: Դա նշանակում է չընտրել այնպիսի միջոց, որը կարող է ավելի խորացնել ընտրողների կամքի աղավաղումը: https://www.elections.am/News/Item/2025

Ամբողջական հոդվածը՝ կցվում է:

Բացի վերը նշվածից, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի https://www.anticorruption.am/hy և ՀՀ քննչական կոմիտեի https://www.investigative.am/investigative պաշտոնական կայքերում ինչպես նաև նույն պետական մարմինների https://www.youtube.com/ կայքի պաշտոնական ալիքներում (@raanti-corruptioncommittee9274, https://www.youtube.com/@investigationcommittee1595/shorts) հրապարակվել են ընտրակաշառքի բացահայտման բազմաթիվ այլ դեպքերի վերաբերյալ հրապարակված նյութեր, որոնք պարունակում են ինչպես վարույթների ընթացքում հայտնի դարձած փաստական տվյալներ, այնպես էլ ձայնագրություններ և տեսագրություններ, որոնք հանրայնացվել են նաև հանրային մուլտիպլեքսում հեռարձակվող հեռուստաընկերությունների եթերներում, այդ թվում՝ Հանրային հեռուստաընկերության:

4. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության.

1-ին հոդվածի՝

«Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:»,

2-րդ հոդվածի՝

«Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին:

Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: (...)»,

7-րդ հոդվածի՝

«Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ»:

168-րդ հոդվածի 5-րդ կետի՝

«Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով՝ (...)

5) լուծում է հանրաքվեի, Ազգային ժողովի և Հանրապետության նախագահի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը. (...)»,

169-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝

«1. Սահմանադրական դատարան կարող են դիմել՝ (...)

11) Ազգային ժողովի ընտրությանը մասնակցած կուսակցությունները կամ կուսակցությունների դաշինքները՝ Ազգային ժողովի ընտրության արդյունքով ընդունված որոշումների հետ կապված վեճերով. (...)»,

Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի.

23-րդ հոդվածի՝

«1. *Սահմանադրությամբ և սույն օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան կարող են դիմել Սահմանադրության 169-րդ հոդվածով նախատեսված մարմինները և անձինք:*

2. Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում նշված դեպքում Սահմանադրական դատարան կարող են դիմել նաև իրավաբանական անձինք՝ Սահմանադրության 74-րդ հոդվածին համապատասխան»,

24-րդ հոդվածի՝

«1. Դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ իրավասու անձի կողմից ստորագրված: Դիմումը ներկայացվում է թղթային կամ էլեկտրոնային եղանակով:

2. Դիմումում նշվում են՝

1) Սահմանադրական դատարանի անվանումը.

2) դիմողի անունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը), հաշվառման (իրավաբանական անձի դեպքում՝ գտնվելու վայրի) կամ բնակության վայրի հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման հասցեից. եթե դիմողը հանդես է գալիս ներկայացուցչի միջոցով՝ դիմողի ներկայացուցչի անունը, հաշվառման կամ բնակության վայրի հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման հասցեից.

3) Սահմանադրության այն հոդվածը, որը Սահմանադրական դատարան դիմելու հիմք է հանդիսանում.

4) Սահմանադրական դատարան ներկայացվող խնդրանքը և դիմողի փաստարկները՝ Սահմանադրության համապատասխան նորմերին կատարված հղումներով.

5) Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին և 5-րդ կետերով նախատեսված դեպքերում այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը կամ պաշտոնատար անձի անունը, որն ընդունել է վիճարկվող ակտը.

6) դիմումին կցվող նյութերի ցանկը: (...)»,

25-րդ հոդվածի՝

«1. Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումին կցվում են՝

1) լիազորագիրը կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող այլ փաստաթուղթ. (...)

3) սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ դիմումի հիմնավորվածությունը հավաստող ապացույցները.

4) դիմողի հայեցողությամբ՝ գործին առնչվող այլ նյութեր: (...)

3. Դիմումն ընդունվելուց հետո դիմող կողմի նոր նյութերն ընդունվում են միայն Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ:»,

32-րդ հոդվածի՝

«1. Գործի փաստական հանգամանքները Սահմանադրական դատարանը պարզում է ի պաշտոնե:

2. Սահմանադրական դատարանը կաշկանդված չէ սահմանադրական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, բացատրություններով, միջնորդություններով, առաջարկություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:»,

77-րդ հոդվածի՝

«1. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարան կարող են դիմել ընտրություններին մասնակցող կուսակցությունները կամ կուսակցությունների դաշինքները:

2. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարան դիմում կարող է ներկայացվել արդյունքների պաշտոնական հրապարակման օրվանից հետո՝ հինգերորդ օրը, մինչև ժամը 18.00-ն:

3. Որպես պատասխանող կողմ՝ դատավարությանը ներգրավվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

4. Անհրաժեշտության դեպքում կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ Սահմանադրական դատարանը կարող է որպես հարակից պատասխանող ներգրավել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնց որոշումները կամ գործողությունները կարող էին ներգործել ընտրությունների արդյունքների վրա, կամ որոնք պարտավոր էին (պարտավոր են) օրենքով սահմանված կարգով ապահովել և պաշտպանել ընտրական իրավունքները, բացառությամբ դատարանների:

5. Այն կուսակցությունները կամ կուսակցությունների դաշինքները, որոնց իրավունքները շոշափվում են կամ կարող են շոշափվել գործի քննության ընթացքում կամ դրա արդյունքում ընդունվելիք որոշմամբ, կարող են Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ որպես երրորդ անձինք ներգրավվել դատավարությանը՝ իրենց դիմումի հիման վրա, իսկ այն դեպքերում, երբ Սահմանադրական դատարանի որոշումը պարտադիր տարածվելու է նաև երրորդ անձանց վրա, ապա Սահմանադրական դատարանն ինքն է պարտավոր այդ անձանց ներգրավել դատավարությանը:

6. Երրորդ անձինք դատավարությանը կարող են ներգրավվել գործի քննության ցանկացած փուլում:

7. Երրորդ անձինք օգտվում են կողմի բոլոր իրավունքներից և կրում նրա բոլոր պարտականությունները, բացառությամբ այն իրավունքների և պարտականությունների, որոնք իրենց էությամբ կիրառելի չեն երրորդ անձանց նկատմամբ:

8. Սահմանադրական դատարանի կողմից որոշում ընդունելու համար անհրաժեշտ ապացույցներ (փաստերի վերաբերյալ տեղեկություններ) ձեռք բերելու առնչությամբ կիրառվում են սույն օրենքի 76-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կանոնները:

9. Սույն հոդվածում նշված գործերի դատաքննությունն իրականացվում է բանավոր ընթացակարգով:

10. Փաստերի վերաբերյալ դիմող կողմի ներկայացրած տեղեկությունները համարվում են հավաստի, եթե պատասխանող կողմը հրաժարվում է դրանց վերաբերյալ իր դիրքորոշումն արտահայտելուց, և եթե դրանք չեն հերքվում Սահմանադրական դատարանի կողմից ձեռք բերված, տվյալ գործով որոշում ընդունելու համար էական նշանակություն ունեցող այլ ապացույցներով:

11. Եթե պատասխանող կողմն ընդունում է այն հանգամանքները, որոնցով դիմող կողմը հիմնավորում է իր պահանջներն ու առարկությունները, ապա դիմող կողմը ազատվում է այդ հանգամանքների վերաբերյալ հետագայում ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությունից:

12. Սույն հոդվածում նշված գործերի քննությունը կարող է կասեցվել միայն այն դեպքում, երբ կասեցումը չի խոչընդոտի տվյալ գործի քննությունը Սահմանադրությամբ և սույն հոդվածի 15-րդ մասով նախատեսված ժամկետներում ավարտելուն:

13. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարանն ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը.

1) Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումը թողնել ուժի մեջ.

2) անվավեր ճանաչել Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումը և

ա. անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները,

բ. անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները և սահմանել մանդատների բաշխման կարգը,

գ. նշանակել ընտրությունների երկրորդ փուլ:

14. Եթե գործի քննության արդյունքում Սահմանադրական դատարանը, սպառելով ապացույցներ ձեռք բերելու համար սույն օրենքով նախատեսված բոլոր միջոցները, այդուհանդերձ, հնարավորություն չի ունեցել պարզելու ընտրությունների իրական արդյունքները, սակայն Սահմանադրական դատարանի կողմից որպես հավաստի գնահատված ապացույցներից ակնհայտ է դարձել, որ ընտրախախտումներն ունեցել են կազմակերպված, զանգվածային, կրկնվող կամ պարբերական բնույթ, և դրանց համադրումը վկայում է դրանց միջև համակարգային այնպիսի փոխկապակցվածության մասին, որի պայմաններում խախտվում են Սահմանադրության 7-րդ հոդվածում ամրագրված ընտրական իրավունքի սկզբունքները, ապա որոշում ընդունելիս Սահմանադրական դատարանն իրավասու է այդ հիմքով անվավեր ճանաչելու ընտրությունների արդյունքները:

15. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարանը որոշում է ընդունում դիմումի մուտքագրման օրվանից ոչ ուշ, քան 15 օր հետո.»,

76-րդ հոդվածի 3-րդ մասի՝

«3. *Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարանն իրավասու է իր որոշումն ընդունելու համար անհրաժեշտ ապացույցներ (փաստերի վերաբերյալ տեղեկություններ) ձեռք բերելը հանձնարարելու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, այդ թվում՝ դատարաններին և դատախազության մարմիններին, անհրաժեշտության դեպքում՝ նաև իր աշխատակազմի աշխատողներին: Ներկայացված ապացույցները ենթակա են հետազոտման Սահմանադրական դատարանի կողմից՝ սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով: Սահմանադրական դատարանն իրավասու է նաև ձևավորելու աշխատանքային խումբ՝ ներգրավելով համապատասխան ոլորտի փորձագետների:*»:

Համաձայն «ՀՀ Ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի.

4-րդ հոդվածի՝

«1. *Ընտրություններն անցկացվում են ընտրական իրավունքի իրականացման՝ ազատության և կամավորության սկզբունքների հիման վրա: Ոչ ոք իրավունք չունի պարտադրելու ընտրողին քվեարկելու որևէ թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին կամ դեմ, ինչպես նաև հարկադրելու ընտրողին մասնակցելու կամ չմասնակցելու ընտրություններին:*

2. Ոչ ոք չի կարող հարկադրանքի որևէ եղանակով ընտրողից բացահայտել, թե ինչպես է ընտրողը մտադիր քվեարկելու կամ ինչպես է քվեարկել:»,

95-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝

«*1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սույն օրենսգրքի 75-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետում ամփոփում է ընտրությունների արդյունքները և ընդունում հետևյալ որոշումներից մեկը. (...)*

4) Ազգային ժողովի ընտրություններն անվավեր ճանաչելու և ընտրությունների վերաքվեարկություն նշանակելու մասին. (...)»,

101-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի՝

«*1. Եթե ընտրությունների ընթացքում տեղի են ունեցել սույն օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշում է ընդունում առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու մասին, եթե այդ միջոցով հնարավոր է շտկել այդ խախտումների հետևանքները: Եթե այդ միջոցով հնարավոր չէ շտկել այդ խախտումները, ապա Ազգային ժողովի ընտրություններն անվավեր են ճանաչվում, և նշանակվում է Ազգային ժողովի ընտրությունների վերաքվեարկություն: (...)*

4. Ազգային ժողովի ընտրությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելուց ոչ շուտ, քան 15, և ոչ ուշ, քան 30 օր հետո սույն օրենսգրքով սահմանված կարգով և կուսակցությունների նույն կազմով անցկացվում է վերաքվեարկություն: (...)»:

5. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն գործի առարկան ընտրական գործընթացի ընթացքում տեղի ունեցած առանձին իրավախախտումներն չեն, այլ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 14-ի N 259-Ա որոշման սահմանադրականությունը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ընտրությունների արդյունքների պարզ թվաբանական ամփոփող մարմին չէ: Այն ընտրական գործընթացի օրինականությունը, ընտրական իրավունքների պաշտպանությունը և ընտրությունների արդյունքների նկատմամբ հանրային վստահությունը ապահովող սահմանադրական նշանակության մարմին է:

ՀՀ Ընտրական օրենսգրքի 95-րդ և 101-րդ հոդվածների տրամաբանությունից բխում է, որ ԿԸՀ-ն պարտավոր է գնահատել ոչ միայն քվեարկության թվային արդյունքները, այլ նաև այնպիսի խախտումների առկայությունը, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա:

Օրենսդիրը հստակ տարբերակում է երկու իրավիճակ.

- երբ խախտումների հետևանքները հնարավոր է վերացնել առանձին տեղամասերում վերաքվեարկության միջոցով,
- և երբ այդպիսի վերացումը հնարավոր չէ, որի դեպքում ընտրությունները ենթակա են անվավեր ճանաչման:

Եթե խախտումների հետևանքները հնարավոր է վերացնել առանձին տեղամասերում վերաքվեարկությամբ, ԿԸՀ-ն պարտավոր է քննարկել այդ տարբերակը: Եթե այդպիսի վերացումը հնարավոր չէ, ԿԸՀ-ն պարտավոր է քննարկել ընտրությունների անվավեր ճանաչման հարցը:

Իրավապահ մարմինների կողմից հրապարակված պաշտոնական տեղեկություններից ակնհայտ է, որ արձանագրված ընտրական հանցագործությունները չեն սահմանափակվել առանձին տեղամասերով կամ առանձին համայնքներով: Ընդհակառակը, հրապարակված տվյալների համաձայն՝ ընտրակաշառքի, ընտրողների նյութական շահագրգռման, ընտրական իրավունքի իրականացմանը խոչընդոտելու և ընտրական գործընթացի վրա ապօրինի ազդեցության դեպքերը արձանագրվել են Հանրապետության տարբեր մարզերում և համայնքներում: Նման պայմաններում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր էր իրավական գնահատական տալ այդ հանգամանքներին և քննարկել ընտրությունների անվավերության հարցը:

Սույն գործով ԿԸՀ-ի վիճարկվող որոշումը, ըստ էության, սահմանափակվել է քվեարկության արդյունքների թվաբանական ամփոփմամբ և չի պարունակում համարժեք պատճառաբանություն այն մասին, թե ինչպես է ԿԸՀ-ն գնահատել իրավապահ մարմինների կողմից արդեն իսկ հրապարակված ընտրական հանցագործությունների վերաբերյալ տվյալները, դրանց հնարավոր ազդեցությունը ընտրական միջավայրի վրա, ընտրողների ազատ կամարտահայտության վրա և ընտրությունների արդյունքների նկատմամբ հանրային վստահության վրա:

ԿԸՀ-ն պարտավոր չէր փոխարինել քրեական հետապնդման մարմիններին, սակայն պարտավոր էր իր սահմանադրական և ընտրահիրավական լիազորությունների շրջանակներում գնահատել՝ արդյոք պաշտոնապես արձանագրված ընտրակաշառքի, նյութական շահագրգռման, ընտրական իրավունքի իրականացմանը խոչընդոտելու և ընտրողների վարքագծի ապօրինի ուղղորդման դեպքերը կարող էին ազդել

ընտրությունների արդյունքների վրա: Այդ գնահատման բացակայությունը վիճարկվող որոշումը դարձնում է թերի պատճառաբանված և սահմանադրորեն խոցելի:

ԿԸՀ-ն փաստացի հրաժարվել է իրականացնել ընտրությունների օրինականության վերաբերյալ իր գնահատողական պարտականությունը և հանդես է եկել որպես արդյունքների մեխանիկական հաշվարկող մարմին, ինչը հակասում է Սահմանադրության 2-րդ և 7-րդ հոդվածների պահանջներին:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ 7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածով երաշխավորված ազատ ընտրության սկզբունքը չի սահմանափակվում միայն այն հանգամանքով, որ ընտրողը քվեախցիկում ֆիզիկապես մենակ է և քվեարկում է գաղտնի: Ազատ ընտրության սկզբունքը ներառում է նաև ընտրողի կամքի ազատ ձևավորման իրավունքը: Եթե ընտրողը նախքան քվեարկությունը հայտնվում է նյութական շահագրգռման, վախի, պարտքի, կախվածության, տեղական հեղինակության, շտաբային վերահսկողության կամ սոցիալական ճնշման համակարգի ներքո, ապա քվեարկության գաղտնիությունը ինքնին բավարար չէ ազատ ընտրության սահմանադրական երաշխիքը ապահովելու համար:

Ընտրակաշառքը սովորական ընտրախախտում չէ: Այն ուղղակիորեն ուղղված է ընտրողի ազատ կամքի փոխարինմանը նյութական կամ սոցիալական կախվածությամբ: Երբ ընտրակաշառքը դառնում է կազմակերպված և համատարած երևույթ, այն դուրս է գալիս առանձին ընտրողների իրավունքի խախտման շրջանակից և վերածվում է ընտրական գործընթացի սահմանադրական աղավաղման:

Սույն գործով ներկայացված պաշտոնական տվյալները վկայում են, որ ընտրակաշառքի և ընտրողների նյութական շահագրգռման դեպքերը չեն ունեցել միայն տեղային կամ մեկուսացված բնույթ: Դրանք դրսևորվել են բազմաստիճան սխեմաներով՝ ընտրողների հավաքագրում, ցուցակագրում, վճարումների քողարկում, ֆինանսական հոսքերի միջնորդավորում, շտաբային կամ աշխատանքային հարաբերությունների օգտագործում, վստահված անձանց և հանձնաժողովի անդամների ինստիտուտների ներգրավում, ընտրողների տեղափոխման և վերահսկողության մեխանիզմներ:

Նման պայմաններում խախտվում է Սահմանադրության 7-րդ հոդվածի բուն էությունը, որովհետև ընտրողը այլևս հանդես չի գալիս որպես ինքնիշխան կամքի ազատ կրող, այլ դառնում է կազմակերպված նյութական և սոցիալական ազդեցության օբյեկտ:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածը սահմանում է, որ իշխանությունը պատկանում է ժողովրդին, և ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների միջոցով:

Այս դրույթը Սահմանադրության ձևական հռչակագիր չէ, այլ հանրային իշխանության լեգիտիմության աղբյուրը սահմանող հիմնարար նորմ:

Ազգային ժողովը կարող է համարվել ժողովրդի իշխանության սահմանադրական կրող միայն այն դեպքում, երբ այն ձևավորվել է ժողովրդի *ազատ և իրական*

կամարտահայտության արդյունքում: Եթե ընտրական գործընթացում այնպիսի մասշտաբի համակարգային խախտումներ են արձանագրվել, որոնք կասկածի տակ են դնում ընտրողի կամքի ազատ ձևավորման և արտահայտման արժանահավատությունը, ապա վտանգվում է ոչ միայն ընտրական իրավունքը, այլ նաև ժողովրդական ինքնիշխանության սկզբունքը:

Սույն գործով խնդիրը ոչ թե այն է, որ ընտրություններում եղել են առանձին խախտումներ: Խնդիրն այն է, որ պաշտոնական տվյալների համակցությունը ցույց է տալիս ընտրողների կամքի ձևավորման միջավայրի համակարգային թունավորում՝ փողի, սոցիալական կախվածության, շտաբային վերահսկողության և կազմակերպված ապօրինի ազդեցության միջոցով: Այդպիսի միջավայրում ձևավորված խորհրդարանական արդյունքը չի կարող առանց սահմանադրական խիստ ստուգման համարվել ժողովրդի անխաթար կամքի արտահայտություն: Ուստի վիճարկվող որոշման սահմանադրականությունը պետք է գնահատվի ոչ միայն ընտրական օրենսդրության տեխնիկական պահանջների, այլ նաև Սահմանադրության 2-րդ հոդվածով ամրագրված ժողովրդաիշխանության սկզբունքի տեսանկյունից:

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատասխանող կողմը կարող է պնդել, որ ընտրական հանցագործությունների վերաբերյալ մի շարք քրեական վարույթներ դեռևս գտնվում են նախաքննության կամ դատաքննության փուլում, և վերջնական դատավճիռների բացակայության պայմաններում Սահմանադրական դատարանը չի կարող գնահատել այդ հանգամանքները

Այդ մոտեցումը իրավականորեն անհիմն է: Սահմանադրական դատարանը սույն գործով չի լուծում քրեական մեղավորության հարց: Սահմանադրական դատարանը գնահատում է ընտրությունների սահմանադրականությունը:

Քրեական վարույթների անավարտ լինելը չի կարող բացառել ընտրությունների սահմանադրական գնահատումը, քանի որ հակառակ դեպքում ընտրությունների արդյունքների վերաբերյալ սահմանադրական վերահսկողությունը կդառնար անիրագործելի: Ընտրական վեճերը լուծվում են կարճ սահմանադրական ժամկետներում, մինչդեռ քրեական վարույթների ավարտը կարող է տևել ամիսներ կամ տարիներ:

Այդ պատճառով սույն գործով էական նշանակություն ունի ոչ թե վերջնական դատավճիռների քանակը, այլ պաշտոնապես արձանագրված և Սահմանադրական դատարանի կողմից հետազոտման ենթակա փաստական տվյալների ամբողջությունը:

Եթե այդ տվյալների համակցությունը ցույց է տալիս կազմակերպված, զանգվածային, կրկնվող և համակարգային ընտրախախտումների պատկեր, ապա Սահմանադրական դատարանը պարտավոր է գնահատել դրանց սահմանադրական հետևանքը:

Սույն գործով ներկայացված պաշտոնական տեղեկությունների ամբողջությունը վկայում է, որ արձանագրված ընտրախախտումները կրել են ոչ թե մեկուսացված կամ պատահական, այլ կազմակերպված, զանգվածային, կրկնվող և համակարգային բնույթ: Հետևաբար առկա են «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 14-րդ մասի կիրառման նախադրյալներ:

Հակառակ մեկնաբանությունը, ըստ որի ընտրությունների արդյունքները կարող են վիճարկվել միայն այն դեպքում, երբ հնարավոր է ճշգրիտ հաշվարկել յուրաքանչյուր առանձին խախտման ազդեցությունը ստացված ձայների թվի վրա, փաստացի կդարձներ Սահմանադրական դատարանի մասին սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 14-րդ մասը գործնականում անկիրառելի: Օրենսդիրը հենց այդ պատճառով է նախատեսել առանձին կարգավորում այն դեպքերի համար, երբ խախտումների բնույթը, ծավալը և տարածվածությունը թույլ չեն տալիս արժանահավատորեն վերականգնել ընտրողների ազատ կամարտահայտության իրական արդյունքը:

Վերոհիշյալ տվյալների համակցված գնահատումը վկայում է, որ արձանագրված խախտումները չեն հանդիսանում մեկ կամ մի քանի մեկուսացված դեպքեր: Դրանք արձանագրվել են Հայաստանի Հանրապետության տարբեր բնակավայրերում, վերաբերել են ընտրական գործընթացի տարբեր փուլերի, իրականացվել են տարբեր մեխանիզմներով և դարձել են միաժամանակ մի քանի իրավապահ մարմինների քննության առարկա: Նման պայմաններում ընտրախախտումները պետք է գնահատվեն ոչ թե առանձին դրվագներով, այլ որպես ընտրական գործընթացի վրա համակցված ազդեցություն ունեցող փոխկապակցված երևույթների ամբողջություն:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 14-րդ մասը նախատեսում է հատուկ սահմանադրաիրավական մեխանիզմ այն դեպքերի համար, երբ ընտրությունների իրական արդյունքները հնարավոր չէ պարզել, սակայն հավաստի գնահատված ապացույցներից ակնհայտ է դառնում, որ ընտրախախտումները ունեցել են կազմակերպված, զանգվածային, կրկնվող կամ պարբերական բնույթ, և դրանց համադրումը վկայում է համակարգային այնպիսի փոխկապակցվածության մասին, որի պայմաններում խախտվում են Սահմանադրության 7-րդ հոդվածում ամրագրված ընտրական իրավունքի սկզբունքները:

Այս նորմը նախատեսված է հենց այն իրավիճակների համար, երբ խախտումների բնույթը թույլ չի տալիս կիրառել պարզ թվաբանական մեթոդ: Եթե հնարավոր լիներ ճշգրտորեն առանձնացնել յուրաքանչյուր անօրինական քվեն և վերականգնել ընտրությունների իրական արդյունքը, ապա կգործեր արդյունքների շտկման կամ առանձին տեղամասերում վերաքվեարկության տրամաբանությունը: Սակայն այն դեպքում, երբ խախտումները կրում են ցանցային, բազմաստիճան, կազմակերպված և հանրապետական տարածում ունեցող բնույթ, իրավականորեն անհնար է դառնում զատել ազատ կամքով տրված քվեն նյութական կամ հոգեբանական ազդեցության ներքո ձևավորված քվեից:

Սույն գործով 77-րդ հոդվածի 14-րդ մասի կիրառման նախադրյալները առկա են հետևյալ պատճառներով.

1. Խախտումները կրել են կազմակերպված բնույթ, քանի որ պաշտոնական տվյալներով դրանք իրականացվել են ոչ թե ինքնաբուխ կամ մեկուսացված անձանց գործողություններով, այլ շտաբային, միջնորդավորված, ֆինանսական և տարածքային ցանցերի միջոցով:

2. Խախտումները կրել են զանգվածային բնույթ, քանի որ քրեական վարույթների թիվը, քրեական հետապնդման ենթարկված անձանց շրջանակը, ձերբակալվածների թիվը,

խուզարկությունների ծավալը և հայտնաբերված ընտրողների ցուցակների մասին պաշտոնական տվյալները վկայում են լայն ընդգրկման մասին:

3. Խախտումները կրել են կրկնվող և պարբերական բնույթ, քանի որ պաշտոնական հաղորդագրություններում նկարագրված սխեմաները տարբեր տարածքներում կրկնվել են նույնական կամ էականորեն նման մեխանիզմներով՝ ընտրողների հավաքագրում, նյութական շահագրգռում, վերահսկողություն, միջնորդավորված վճարումներ, շտաբային կամ աշխատանքային հարաբերությունների քողի տակ ֆինանսավորում, վստահված անձանց և հանձնաժողովի անդամների ինստիտուտների օգտագործում:

4. Խախտումները ունեցել են համակարգային փոխկապակցվածություն, քանի որ դրանցում առկա են ընդհանուր բնույթի ֆինանսական աղբյուրների, կազմակերպչական մեթոդաբանության, դերաբաշխման, հաղորդակցության քողարկման, բացահայտման ռիսկերի նվազեցման և ընտրողների վարքագծի վերահսկման կրկնվող տարրեր:

5. Նշված հանգամանքների համադրումը խախտել է Սահմանադրության 7-րդ հոդվածի բուն էությունը, քանի որ ազատ ընտրության սկզբունքը ենթադրում է ոչ միայն գաղտնի քվեարկության հնարավորություն, այլ նաև ընտրողի կամքի ձևավորման ազատ միջավայր:

Այսպիսով, սույն գործով հարցը չի կարող լուծվել միայն ստացված ձայների թվաբանական համադրմամբ: Երբ ընտրական գործընթացը ենթարկվում է համակարգային նյութական ազդեցության, ընտրությունների արդյունքների նկատմամբ հանրային վստահության խաթարումը ինքնին դառնում է սահմանադրական նշանակության հանգամանք:

ԸՆՏՐԱԿԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ և ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՊԱՏՃԱՌԱՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿԱՊԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն գործով պատճառահետևանքային կապը չի կարող սահմանափակվել այն հարցով, թե կոնկրետ քանի քվե է տրվել ընտրակաշառքի դիմաց: Համակարգային ընտրախախտումների դեպքում պատճառահետևանքային կապը գնահատվում է ոչ միայն քանակական, այլ նաև որակական չափանիշներով:

Ընտրակաշառքի կազմակերպված և զանգվածային բնույթը փոխում է ոչ միայն կոնկրետ ընտրողի քվեն, այլ ամբողջ ընտրական միջավայրը:

Այն ազդում է քաղաքական մրցակցության հավասարության վրա, խաթարում է ընտրողի ազատ կամքի ձևավորման պայմանները, ձևավորում է անարդարության և նախապես գնված արդյունքի հանրային ընկալում, նվազեցնում է օրինական քաղաքական մրցակցության նշանակությունը և ապօրինի նյութական ռեսուրս ունեցող ուժերին տալիս է սահմանադրորեն անթույլատրելի առավելություն:

Հետևաբար, երբ ընտրախախտումները կրում են կազմակերպված, զանգվածային և համակարգային բնույթ, դրանց ազդեցությունը չի կարող չափվել միայն հայտնաբերված ընտրակաշառք ստացած անձանց թվով: Նման խախտումները ստեղծում են ընտրական գործընթացի ամբողջականության խաթարման վիճակ, որի պայմաններում անհնար է վստահությամբ պարզել՝ պաշտոնապես ամփոփված արդյունքը արտահայտում է ժողովրդի

ազատ կամքը, թե համակարգային ապօրինի ազդեցության հետևանքը: Այդ իսկ պատճառով սույն գործով կիրառելի չէ պարզ մաթեմատիկական մեթոդը: Սահմանադրական դատարանի առջև դրված հարցն է ոչ թե միայն այն, թե որքան ձայն է փոխվել, այլ այն, թե արդյոք ընտրությունների իրական արդյունքը հնարավոր է արժանահավատորեն պարզել՝ հաշվի առնելով խախտումների ծավալը, բնույթը, տարածվածությունը և փոխկապակցվածությունը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Միջազգային ընտրական չափանիշները հաստատում են, որ ընտրությունների ազատությունն ու օրինականությունը գնահատվում են ոչ միայն քվեարկության օրվա ընթացակարգերով, այլ ընտրական գործընթացի ամբողջականությամբ:

Ազատ ընտրությունը ենթադրում է ոչ միայն գաղտնի քվեարկություն, այլ նաև ազատ նախընտրական միջավայր, հավասար մրցակցային պայմաններ, ընտրողի կամքի ազատ ձևավորում, արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ և ընտրական խախտումների իրական քննություն:

Եվրոպայի խորհրդի Ժողովրդավարություն իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) կողմից 2002 թվականի հոկտեմբերի 30-ին ընդունված «Ընտրական հարցերում լավ պրակտիկայի օրենսգիրք»-ը (*Code of Good Practice in Electoral Matters, CDL-AD(2002)023rev2-cor, ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի 51-րդ և 52-րդ լիագումար նիստերում (2002 թ. հուլիսի 5–6 և հոկտեմբերի 18–19*) փաստաթղթում արձանագրված է, որ ժողովրդավարական ընտրությունների հիմնարար սկզբունքներն են համընդհանուր, հավասար, ազատ, գաղտնի և ուղղակի ընտրական իրավունքը, իսկ ընտրական գործընթացը պետք է ապահովի ընտրողների կամքի ազատ և իսկական արտահայտումը: Նույն փաստաթղթով ընդգծվում է, որ ընտրական իրավունքի արդյունավետ պաշտպանությունը պահանջում է այնպիսի իրավական միջոցների առկայություն, որոնք հնարավորություն կտան վերականգնել խախտված ընտրական իրավունքները և անհրաժեշտության դեպքում վերանայել ընտրությունների արդյունքները: Այլ կերպ ասած, Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական հարցերում լավ պրակտիկայի օրենսգիրքը» ընտրական իրավունքի եվրոպական ժառանգության հիմքում դնում է համընդհանուր, հավասար, ազատ, գաղտնի և ուղղակի ընտրության սկզբունքները և դիտարկում է ընտրական գործընթացը որպես ամբողջական ցիկլ՝ ներառյալ նախընտրական, քվեարկության և հետընտրական փուլերը:

ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (OSCE/ODIHR) ընտրությունների դիտարկման մեթոդաբանության և «Election Observation Handbook»-ի համաձայն՝ ընտրությունների գնահատումը չի սահմանափակվում միայն քվեարկության օրվա ընթացակարգերով կամ քվեաթերթիկների հաշվարկով, այլ ներառում է ամբողջ ընտրական գործընթացի գնահատումը, այդ թվում՝ նախընտրական միջավայրը, քաղաքական մրցակցության պայմանները, ընտրողների վրա ազդեցության հնարավոր մեխանիզմները և ընտրողների ազատ կամարտահայտության ապահովման աստիճանը:

OSCE/ODIHR-ի ընտրությունների դիտարկման մեթոդաբանությունը ևս ընտրությունների գնահատումը կապում է ոչ միայն ձայների հաշվարկի հետ, այլ նաև քաղաքական միջավայրի, քարոզարշավի պայմանների, ընտրողների ազատության, մրցակցության հավասարության և ընտրական գործընթացի նկատմամբ վստահության հետ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ազատ ընտրությունների իրավունքը պահանջում է, որ պետությունը ապահովի ոչ միայն քվեարկելու ձևական հնարավորություն, այլ նաև ընտրական լուրջ խախտումների վերաբերյալ բողոքների արդյունավետ քննություն և ընտրական գործընթացի ամբողջականության պաշտպանություն: Namat Aliyev v. Azerbaijan, Kerimova v. Azerbaijan և Davydov and Others v. Russia գործերի տրամաբանությունից հետևում է, որ ընտրական լուրջ խախտումների անարդյունավետ գնահատումը կարող է ինքնին հանգեցնել ազատ ընտրությունների իրավունքի խախտման:

Սույն գործով միջազգային չափանիշների կիրառումը հանգեցնում է նույն եզրակացությանը. երբ պաշտոնական տվյալները վկայում են ընտրակաշառքի և ընտրողների կամքի վրա ապօրինի ազդեցության կազմակերպված, զանգվածային և համակարգային բնույթի մասին, ընտրությունների սահմանադրականությունը չի կարող պահպանվել միայն այն փաստարկով, որ քվեաթերթիկները հաշվարկվել են և արդյունքները թվաբանորեն ամփոփվել են:

ՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԿՈՂՄԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱԿԱՓԱՍՏԱՐԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՀԵՐՔՈՒՄ

Պատասխանող կողմը կարող է պնդել, որ բացահայտված դեպքերը չեն ապացուցում ընտրությունների ընդհանուր արդյունքի վրա կոնկրետ թվային ազդեցություն: Սակայն այդ մոտեցումը անտեսում է ընտրական խախտումների համակարգային բնույթը և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 14-րդ մասի իմաստը: Եթե օրենսդիրը պահանջեր միայն թվաբանորեն ապացուցել յուրաքանչյուր խախտման ազդեցությունը, ապա 77-րդ հոդվածի 14-րդ մասը չէր ունենա ինքնուրույն նշանակություն: Նշված նորմը նախատեսված է հենց այն իրավիճակների համար, երբ խախտումների համակարգային բնույթի պատճառով հնարավոր չէ վերականգնել իրական արդյունքը, սակայն ակնհայտ է, որ ազատ ընտրության սահմանադրական սկզբունքը խախտվել է:

Պատասխանող կողմը կարող է նաև պնդել, որ քանի դեռ քրեական վարույթները ավարտված չեն, ընտրությունների արդյունքները չեն կարող անվավեր ճանաչվել: Սակայն այդ մոտեցումը նույնպես անհիմն է, քանի որ Սահմանադրական դատարանը չի հաստատում քրեական մեղավորություն, այլ գնահատում է ընտրությունների սահմանադրական լեգիտիմությունը: Քրեական վարույթների անավարտությունը չի կարող կասեցնել կամ չեզոքացնել ընտրությունների սահմանադրական վերահսկողությունը:

Պատասխանող կողմը կարող է պնդել նաև, որ ընտրությունները պետք է գնահատել տեղամասային խախտումների տրամաբանությամբ: Սակայն սույն գործով խախտումները չեն սահմանափակվում առանձին տեղամասերով: Դրանք վերաբերում են ընտրողների կամքի ձևավորման ամբողջ միջավայրին, քաղաքական մրցակցության հավասարությանը և

ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահությանը: Հետևաբար առանձին տեղամասային վերաքվեարկությամբ դրանց հետևանքները վերացնել հնարավոր չէ:

Վերը թվարկված խախտումների համատեքստում ակնհայտ է, որ խախտվել են Սահմանադրության 7-րդ հոդվածով ամրագրված՝ ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրելու իրավունքի սկզբունքները: ՀՀ ընտրական օրենսգրքի 4-րդ հոդվածի համաձայն՝ Ընտրություններն անցկացվում են ընտրական իրավունքի իրականացման՝ ազատության և կամավորության սկզբունքների հիման վրա: Ոչ ոք իրավունք չունի պարտադրելու ընտրողին քվեարկելու որևէ թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին կամ դեմ, ինչպես նաև հարկադրելու ընտրողին մասնակցելու կամ չմասնակցելու ընտրություններին: Ոչ ոք չի կարող հարկադրանքի որևէ եղանակով ընտրողից բացահայտել, թե ինչպես է ընտրողը մտադիր քվեարկելու կամ ինչպես է քվեարկել: Արձանագրված իրավախախտումներից փաստվում է, որ ընտրությունների ընթացքում խախտվել է անձանց ազատ կամահայտնության իրավունքը, ընտրական գործընթացներն ուղեկցվել են ընտրակաշառքի բազմաթիվ դեպքերով: Այս մասին է վկայում նաև ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից ՀՀ արդարադատության նախարարին ուղղված գրությունը նախընտրական ժամանակահատվածում ստացված կոռուպցիոն բնույթի հանցանքների մասին բազմաթիվ հաղորդումների վերաբերյալ (կցվում է):

Այսպիսով, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից՝ 3 տեղամասի քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելուց հետո վերաքվեարկություն չնշանակելու հանգամանքը թեև հիմնավորվում է և գնահատվում է իրավաչափ, սակայն գտնում ենք, որ քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելուն զուգահեռ պետք է նաև սահմանվեր մանդատների բաշխման կարգ:

6. ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ.
ապացույցներ պահանջելու վերաբերյալ

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածը, 76-րդ հոդվածի 3-րդ մասը և 77-րդ հոդվածի 8-րդ մասը՝ խնդրում ենք Սահմանադրական դատարանին պահանջել և հետազոտել հետևյալ նյութերը.

1. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեից՝ ընտրական հանցագործությունների վերաբերյալ նախաձեռնված քրեական վարույթների նյութերը՝ սույն դիմումում նշված փաստերին վերաբերելի մասով, այդ թվում՝ ընտրակաշառքի սխեմաների, ֆինանսավորման աղբյուրների, միջնորդավորված վճարումների, շտաբային կառույցների, վստահված անձանց և հանձնաժողովի անդամների ներգրավման վերաբերյալ տվյալները:

2. ՀՀ քննչական կոմիտեից՝ ընտրական հանցագործությունների վերաբերյալ քրեական վարույթների նյութերը՝ ներառյալ խուզարկությունների արձանագրությունները, հայտնաբերված ցուցակները, էլեկտրոնային կրիչների, բջջային հեռախոսների, Excel ֆայլերի, ընտրողների տվյալների բազաների, հաղորդագրությունների և այլ փաստաթղթերի վերաբերյալ զննման արձանագրությունները:

3. ՀՀ գլխավոր դատախազությունից՝ դատարան ուղարկված քրեական վարույթների մեղադրական եզրակացությունները և դրանցում նկարագրված փաստական հանգամանքների ամփոփագրերը՝ ըստ քաղաքական ուժերի, տարածքների, մեղադրվող անձանց կարգավիճակի և ենթադրյալ հանցավոր սխեմաների բնույթի:

4. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից՝ վիճարկվող որոշման ընդունմանը նախորդած նիստերի արձանագրությունները, ԿԸՀ անդամների քննարկումները, ընտրական հանցագործությունների վերաբերյալ ստացված տեղեկությունների ուսումնասիրության նյութերը, դրանց ազդեցության գնահատման վերաբերյալ գրագրությունը, ինչպես նաև այն հիմնավորումները, որոնց հիման վրա ԿԸՀ-ն չի քննարկել ընտրությունների անվավերության կամ վերաքվեարկության հարցը:

5. Անհրաժեշտության դեպքում՝ իրավասու մարմիններից պահանջել արտերկրում բնակվող ընտրողների կազմակերպված տեղափոխման, ֆինանսավորման, ընտրողների վրա նյութական կամ այլ ազդեցության հնարավոր մեխանիզմների վերաբերյալ նյութերը՝ սույն գործով ներկայացված փաստերին վերաբերելի մասով:

6. Անհրաժեշտության դեպքում ձևավորել փորձագիտական աշխատանքային խումբ՝ ընտրակաշառքի բացահայտված սխեմաների տարածքային, ֆինանսական, կազմակերպական և ընտրական արդյունքների վրա հնարավոր ազդեցության համակցված գնահատման նպատակով:

7 ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ.
հարակից պատասխանողներ ներգրավելու վերաբերյալ

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անհրաժեշտության դեպքում կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ Սահմանադրական դատարանը կարող է որպես հարակից պատասխանող ներգրավել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնց որոշումները կամ գործողությունները կարող էին ներգործել ընտրությունների արդյունքների վրա, կամ որոնք պարտավոր էին (պարտավոր են) օրենքով սահմանված կարգով ապահովել և պաշտպանել ընտրական իրավունքները:

Սույն գործով ներկայացված փաստական տվյալների զգալի մասը հիմնված է ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի և ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից հրապարակված պաշտոնական տեղեկությունների, քրեական վարույթների շրջանակներում ձեռք բերված տվյալների, պաշտոնական հաղորդագրությունների, ինչպես նաև նշված մարմինների կողմից կատարված իրավական գնահատականների վրա:

Միաժամանակ, նշված մարմինները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ օժտված են ընտրական իրավունքների դեմ ուղղված հանցագործությունների կանխման, բացահայտման, քննության, քրեական հետապնդման և ընտրական իրավունքների պաշտպանության գործառույթներով:

Դիմումում բարձրացված հարցերի շրջանակը անմիջականորեն առնչվում է նշված մարմինների կողմից արձանագրված ընտրական հանցագործություններին, դրանց ծավալին, տարածվածությանը, կազմակերպվածության աստիճանին, ինչպես նաև ընտրական գործընթացի վրա դրանց ազդեցության գնահատմանը:

Հաշվի առնելով, որ սույն գործով քննության առարկա են ընտրական իրավունքների հնարավոր զանգվածային և համակարգային խախտումները, իսկ վերոնշյալ պետական մարմինները օրենքով պարտավոր էին և պարտավոր են ապահովել ու պաշտպանել ընտրական իրավունքները, գտնում ենք, որ առկա են «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված նախադրյալները՝ նրանց որպես հարակից պատասխանողներ սույն գործին ներգրավելու համար:

Բացի այդ, նշված մարմինների ներգրավումը որպես հարակից պատասխանողներ կնպաստի գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննությանը, ինչպես նաև Սահմանադրական դատարանին հնարավորություն կտա անմիջականորեն ստանալ պարզաբանումներ ընտրական հանցագործությունների վերաբերյալ իրականացված քրեական վարույթների ընթացքի, ձեռք բերված ապացույցների և դրանց հիման վրա կատարված պաշտոնական գնահատականների վերաբերյալ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ

ՀՀ գլխավոր դատախազությանը, ՀՀ քննչական կոմիտեին և ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեին ներգրավել սույն գործով որպես հարակից պատասխանողներ:

8. ՊԱՀԱՆՋ.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 5-րդ կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 13-րդ մասի 2-րդ կետի *բ* ենթակետով, դիմումում արձանագրված և ներկայացված ենթադրյալ համակարգային բնույթի ընտրախախտումների վերաբերյալ առկա տեղեկությունները, դրանց կազմակերպված, զանգվածային և պարբերական բնույթը, ինչպես նաև դրանց էական ազդեցությամբ պայմանավորված խնդիրների ու փաստերի հաշվառմամբ՝ լուծել ՀՀ Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքներով ընդունված ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 14–ի N 259-Ա որոշման հետ կապված վեճը, մասնավորապես՝

Անվավեր ճանաչել ՀՀ ԿԸՀ 2026 թվականի հունիսի 14–ի N 259-Ա որոշմամբ արձանագրված ընտրության արդյունքները և սահմանել մանդատների բաշխման կարգը:

9. Դիմումին կցվող նյութերի ցանկը

1) Լիազորագիր 2 օրինակից,
2) Կուսակցության փոխնախագահի անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
3) Կուսակցության քաղաքական խորհրդի 2026 թվականի ապրիլի 23-ի նիստի արձանագրության պատճենը (Կուսակցության փոխանախագահի ընտրության վերաբերյալ),
4) Կուսակցության քաղաքական խորհրդի 2026 թվականի հունիսի 6-ի նիստի արձանագրության պատճենը (Կուսակցության նախագահին գործուղելու վերաբերյալ),
5) Կուսակցության ներկայացուցիչների փաստաբանական գործունեության արտոնագրերի պատճենները և անձը հաստատող փաստաթղթի պատճենները,
6) ՀՀ Արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանից քաղվածք,
7) <<Հանուն Հանրապետության Ժողովրդավարության պաշտպանների դաշինք>> կուսակցության կանոնադրության կրկնօրինակը,
8) Ազգային ժողովի հերթական ընտրություններին մասնակցելու համար <<Հանուն Հանրապետության Ժողովրդավարության պաշտպանների դաշինք>> կուսակցության ընտրական ցուցակը գրանցելու մասին և Ազգային ժողովի հերթական ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին հերթական համարներ տրամադրելու մասին ԿԸՀ որոշումների պատճենները,
9) ԿԸՀ 2026 հունիսի 14-ի թիվ 259-Ա որոշման պատճենը,
10) ԿԸՀ 2026 թվականի հունիսի 10-ի 249-Ա որոշման պատճենը,
11) ԿԸՀ 2026 թվականի հունիսի 11-ի 254-Ա և 255-Ա (35/65, 10/51 ընտրատեղամասերի արդյունքների անվավեր ճանաչում) որոշումների պատճենները,
12) ԿԸՀ 2026 թվականի հունիսի 12-ի թիվ 12 ընտրատարածքային հանձնաժողովի թիվ 14-Ա որոշման (12/13 ընտրատեղամասի ընտրության արդյունքների անվավեր ճանաչելու մասին) պատճենը,
13) Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի Արդարադատության նախարարին ուղղված գրությունը,
14) ԿԸՀ նախագահի 2026 թվականի հունիսի 15-ի << ՀՀ ԿԸՀ կողմից 3 ընտրատեղամասի քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելուց հետո վերաքվեարկություն չնշանակելու վերաբերյալ>> հայտարարության պատճենը,
15) ՀՀ գլխավոր դատախազության 2026 թվականի հունիսի 5 <<Դատախազներն ընտրական հանցագործությունների վերաբերյալ 17 քրեական վարույթ՝ 60 անձի վերաբերյալ, հանձնել են դատարան>> վերտառությամբ մամուլի հաղորդագրության պատճենը,
16) Սույն դիմումի 4-րդ բաժնում նշված դիմումի քննության շրջանակներում էական հանգամանքները հավաստող էլեկտրոնային հղումները ներառող ցանկով էլեկտրոնային կրիչը:

Դիմողի ներկայացուցիչ՝

Վահագն Մարտիրոսյան

19, հունիսի, 2026